



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*



«ՄԻՖ» ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



# ԱՎԱԽՔԻ



# ՈՂՈՎՐԴԱԿԱՆ



# ԵՔԻԱԹՆԵՐ

Երևան, 2012

ՀՏԴ 398.2  
ԳՄԴ 82.3(0)  
Զ 360

ԿԱԶՄՈՂՆԵՐ՝  
պատմական գիտությունների թեկնածուներ  
Վահե ՍԱԼԻԳՅԱՆ, Էդուարդ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԳԻՒՔԸ ԼՈՒՅՍ Է ԸՆԾԱՅՎԵԼ ՀՀ ՍՓՅՈՒՆՔԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Գրքի հրատարակման կողմանական ծախս  
սերը հոգացել է «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի  
գլխավոր տնօրեն Արմեն Մկոյանը

Զավախքի ժողովրդական հերիաքներ / «Միտք» վերլուծական կենտրոն,  
Զ 360 Կազմ.՝ Վ. Սարգսյան, Է. Աբրահամյան.-Եր.:«Միտք» վերլուծական կենտրոն, 2012. 72 էջ:

Ներկայացվող ժողովածուում առաջին անգամ փորձ է արվել հայ անվանի ազգագրագետների կողմից  
մինչ օրս գրի առնված և տարբեր գրքերում հրատարակված Զավախքի ժողովրդական հերիաքներն ընթեր-  
ցողին ներկայացնել մեկտեղված տեսքով:

ՀՏԴ 398.2  
ԳՄԴ 82.3(0)

ISBN 978-99941-2-635-4

© «Միտք» վերլուծական կենտրոն, 2012

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԱՅՍ ԳՐՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Զավախիքի հերիարքների սույն ժողովածովի հիմքը կազմում են երկու հրատարակություններ: Առաջինը՝ Հայոց Ազգագրական ընկերության Ախալքարքի մասնաճյուղի կողմից 1911 թ. Ալեքսանդրապոլս հրատարակած «Պատավաշուն» գրքույկն է, որտեղ տեղ են գտել հայ նշանավոր ազգագրագետ և բանահավաք Ե. Լալայանի կողմից գրի առնված Զավախիքի ժողովրդական չորս հերիարքներ: Երկրորդը՝ ՀՍՍՌ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից հրատարակած «Հայ ժողովրդական հերիարքների» IV հատորն է, որտեղից վերցրել ենք Զավախիքի ժողովրդական հերիարքների մասցած չորս գործերը:

Չնայած «Հայ ժողովրդական հերիարքների» IV հատորում Զավախիքի ժողովրդական բոլոր ութ հերիարքների տեղ գտնելուն, մենք նապատակահարմար ենք գտել չորս հերիարքները վերցնել հիշյալ «Պատավաշուն» ժողովածովից, քանի որ այն հրատարակվել է հեղինակի՝ Ե. Լալայանի կենդանության օրոք և լեզվառաջին առումով ավելի հարազատ է Զավախիքի բարբառին: Բացի այդ, ՀԺՀ IV հատորի նշյալ չորս հերիարքները նույնակա արտասպակել են «Պատավաշնչից»:

Մնացյալ չորս հերիարքներից, որոնք վերցված են «Հայ ժողովրդական հերիարքների» IV հատորից, երեքը ՀՍՍՌ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը հրատարակել է արխիվային ձեռագրերի հիման վրա: Այդ ձեռագրերը պահպանվում են Բանահյուսական արխիվում (Երվանդ Լալայանի փոն, գործ 1, N 899), վերջիններիս վրա դրված է «Ե. Լալայանի խմբարշավ» կնիքը: ՀԺՀ IV հատորի մեկ հերիարք է, որը զետեղել ենք սույն գրքույկում, իր հերթին արտատպակած է «Ազգագրական հանդեսից» (19-րդ դիրք, էջ 158): Հերիարքը գրի է առել Ե. Լալայանը:

Փաստորեն, սույն պատկերազարդ գրքույկում տեղ են գտել մինչ այժմ գրի առնված և տարբեր կերպ հրատարակված Զավախիքի ժողովրդական ութ հերիարքներ: Վերջիններիցս հինգը գրի է առել Հայոց մշակույթի հենապուներից մեկը հանդիսացող Զավախիքան մշակույթի երախտավոր, Զավախիքի ազգագրության և բանահյուսության մեծ նվիրյալ Երվանդ Լալայանը, իսկ մնացած երեքը գրի են առնվել վերջինիս կողմից 1911-1916 թթ. դեկավարած խմբարշավի արդյունքում՝ հայ ժողովրդական բանահյուսության այլ նվիրյալների կողմից: «Էրգրումում մարդ չեղավ, Ստամբուլում աղա եղավ» վերնագիրը կրող հերիարքը չի ներառված ՀԺՀ IV հատորի «հիմնական տեքստեր» բաժնի Զավախիքի հերիարքների շարքում, այսուեղ կա միայն յոթ հերիարք: Նշված հերիարքը հատորի խմբագիրը տեղադրել է նույն գրքի «1-ին հավելված» բաժնում («1-ին հավելված» բաժնում զետեղված են այն հերիարքները, որոնք բովանդակությամբ թույլ են, չունեն զեղարկեստական-պատմողական այն վարպետությունն ու արժեքը, ինչ-որ հիմնական տեքստեր բաժնինը): «Կախարդ Արապը հերիարք վերցրել ենք ոչ թէ ՀԺՀ IV հատորի «հիմնական տեքստեր» բաժնի Զավախիքի հերիարքների շարքից, այլ նախընտրել ենք նույն հերիարքն արտասպակել «2-րդ հավելվածից» (այսուեղ զետեղված են հատորի հիմնական տեքստերից վերցրած՝ յուրաքանչյուր խմբից մեկական հերիարք, տվյալ տեղավայրի խոսվածքի ձևաբանական ու արտասանական առանձնահատկությունների գիտական ճշգիտ տառապարձությամբ):

Գիրքը կազմելիս հավատարիմ չենք մնացել ՀՍՍՌ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Հայ ժողովրդական հերիաքներ» հասորյակի՝ հերիաքների դասավորման սկզբունքին, այն է՝ սկզբում դնել հրաշապատում (կախարդական), ապա իրապատում (կենցաղային) հերիաքները: Գրքում հերիաքները դասավորել ենք՝ սկզբում բնագրային հերթականությամբ դնելով «Պառավաշնչի», այնուհետև մնացյալ՝ ՀԺՀ IV հասորյակից արտատպվող հերիաքները: Հակառակ սրան՝ բոլոր հերիաքներն արտատպելիս վերջիններս չենք ենթարկել որևէ խմբագրական, սրբագրական, լեզվառական կամ այլ կարգի փոփոխման: Հերիաքներն արտատպված են «Պառավաշնչից»՝ այնպես, ինչպես կան, պահպանել ենք նաև ՀԺՀ IV հասորի խմբագրական կոլեգիայի և կազմողների բոլոր մշակումներն ու իրականացված խմբագրական-սրբագրական աշխատանքները:

Վերջում ավելացնենք, որ սույն ժողովածուի յուրաքանչյուր հերիաքի վերջում ՀԺՀ IV հասորից արտատպել ենք տվյալ հերիաքի անձնագիրը, որի միջոցով ընթերցողը մանրամասն տեղեկություններ կստանա հերիաքի ստեղծման թվականի, վայրի, գրի առնողի, հրատարակման աղբյուրի, բարբառային տեսակի և այլին մասին: Քանի որ «Պառավաշնչում» չկան այդպիսի անձնագրեր, ապա այդ չորս հերիաքների անձնագրերը նույնպես վերցըել ենք ՀԺՀ IV հասորից: Անձնագրերն արտատպելիս՝ վերջիններից կրատակել ենք այն մասերը, որոնք տվյալ հերիաքի սյուժեն համեմատում են կամ նմանեցնում ինչպես IV, այնպես էլ նախորդ հասորներում տեղ գտած այլ շրջանների ժողովրդական հերիաքների հետ:

Զավախիքի ժողովրդական բանահյուսության այս եզակի գանձերը, որոնք պահպանել և մեր մշակույթի երախտավորներին է պահ տվել ջավախահյությունը, իրենց մեջ պարունակում են վերջինիս նիստու կացի, կենցաղի, տարբեր սովորույթների ու հավատալիքների բոլոր արտահայտչածերը: Սյուժեներում ամենուր գերիշխում է արդարությունը, որն արտահայտված է քազակորի, արդար դատաստանների, դավաճաններին, չարերին անխնա պատժելու իրողությունների տեսքով: Այսպիսի հերիաքների առկայությունը վար ապացույցն է այն բանի, որ արդարությունն կոչված վեհ ու մարդկային զգացումն ի սկզբանե արմատացած է եղել ջավախահյության գիտակցության մեջ, զգացում, որը ծնվելով յուր երնիկ բնօրբանում ապրող հայ ազգի այդ հատվածի հետ՝ ապրում է նրանից անբաժան:

Ի վերջո՝ այս հերիաքներն անփոխարինելի շտեմարան են նրանց համար, ովքեր կուգենան առավել մոտիկից ծանոթանալ հայոց մայր բարբառներից մեկի՝ «կը» ձյուին պատկանող Կարն հիասքանչ բարբառի հետ, որից թիւ է տարբերվում Զավախիքի (Ախալցխա-Ախալքալաք-Ծալկայի) զավառաբարբառը:


պ.գ.թ. Վահե ՍԱՐԳՈՅԱՆ

## ԱՆԹԻՈՒ ԱՇԽԱՐՁ ԷՐԹՅՈՂ ՏՂԱՆ




Առի կը չի ըլլի՝ մէ թաքաւորմ գըլլի: Ատիկ կունենայ կը իրեք տղայ: Տղաքն օր հասնին կը թաքաւորը կըսէ կը թը՝ էկէր դայեղներդ ցկէք, ում դուռն օր ընկալ՝ անոր աղջիկը առնենք ծեզի: Գուգան ցկեն կը, մենծինը գընի կը մէ հարցատիմ, միջնակինը՝ մէ իշխընիմ դուռ, ատոնց աղջիկները կառնեն: Պզտըկինը կերթայ ծովին դրաղը մէ գորտիմ՝ փոր խրի կը: Տղան կերթայ տեսնի կը գորտը, կըսէ. «Հըլպտ իմ բաղդս ա աս էր», վերցընէ դնէ կը եալլուկիմ՝ մէջ բերէ կը հօրը: Յարը հորսոտիկը վրան ու գուգէ օր տղին գլխատել տայ. իշխընները, մարը մէջ գընին, թաքաւորին հերսը գիշեցնեն: Տղան աղաչէ կը թը՝ գորտը մէ օթախմ՝ ցկեն, էրթայ մնայ: Տանին մէ մունտառ օթախմ՝ ցկեն կը վար: Տղան մէկալ օրը գուգայ օր գորտը տեսնի, սիրտը քաշէ կը, չի համրիրէ, տեսնի կօր ան մունտառ օթախը հայլի է դառէ, գորտն ա մէ քօշամ քուչուրեր է: Կառնէ անմէն ինչ, խառնէ կը իրար ու գելլէ դուս, դրան յետևք պահ մտնի կը, ծակէն կաշէ: Մէմա տեսնի կ'օր գորտը վրայէն փոստը ցկեց ու էրկնային լուս աղջիկմ՝ դառաւ: Անոր շախւէն մութ պատերը լուս տուին: Յըմը ջանմսան տղայ, դուռը բանայ ու վազգէ գրկէ ատոր. ատիկ չաշմիշ գլիի օր փախչի էրթայ փոստն հագնի, տղան անորէն առաջ խլէ կը փոստն ու ցրկէ կը թնդիր, վաշէ կը: Արթղ գլիին մարթ ու կնիկ, իրար հետ սիրով ապրին կը:

Մէ օրմ' թաքաւորը տեսնի կ'օր իրեն դոնախսանին մէ




շաւխմ' է դիպէ. մարդ դրկէ կ'օր իմանան թը ադ ինչէն է: Կերթան, գուգան թը՝ ղոնախանին դէմը մէ աղջիկմ' է կայնէ, անպէս աղջիկմ' օր՝ սաղ աշխոքին մէջը անգըտնուելիք, լուսն երեսէն կաթէ կը. ատ շաւխը անորէն է դիպէ: Թաքաւորը դուս գելլէ տեսնի կը ադ աղջկամ՝ խելքը գլխէն կերթայ, սիրտը խմէ կը՝ հրճը ինչ էնս օր իրեն հարսն է: Օրմ' երկուս՝ ատիկալ զաւք չի ըլլի, միտքը դմէ կ'օր տղին գլոխը ադէ ու ասոր ինքը առնէ: Կանչէ կը տղին, կըսէ. «Դու պիտի էրթաս ընծի անպէս չատըրմ բերես օր՝ սաղ ղոշունս տակը հաւքի, թը չը՝ գլոխտ կրօնել կուտամ: Տղան հասկընայ կը բանը, մուլոր գընի ջանը. խեղճ ու սէֆիլ գուգայ տուն. օ սահաթ կնիկը դէն կը վազգէ, փաթթուի կը վիզը, հարցընէ կը թը՝ ընչի՞ է տիսրէ: Ան ա բան չի պահէ, կըսէ կը թը՝ թաքաւորը իրմէն անպէս չատըրմ ուզեց, օր սաղ ղոշունը մէջը հաւքի: «Աման, կըսէ կնիկը, ատ ա բան է՝ ու, քընը խանում մարիկիս ըսէ թը՝ աղջիկը ծեր պօտի չատըրը ուզեց, առ տար իրեն»: Ասիկ կերթայ ծովին քեանարը, կանչէ կը խանում մարիկին: Սէ խանում խարուն կնիկմ' գելլէ դուս: Ասիկ կըսէ կը թը՝ ծեր աղջիկը ծեր պօտի չատըրը ուզեց: Լա՛, կըսէ կնիկը, սըկի կը ջրին տակն ու մէմ ա գելլէ երեսը, մէ ղոճա չատըրմ' կուտայ փեսին: Փեսան շնորհակալ գլլի, ուրախ ուրախ կառնէ, տանի կը թաքաւորին, թաքաւորը չատըրը զարնել կուտայ, սաղ ղոշունը մէջը թօփ գլլի, կեսն ա բաց կը մնայ: Թաքաւորը մաթ մնայ կը: Նորէն կանչէ կը քովը՝ կըսէ թը՝ պտի թեզմ' էրթաս, կակլի մեծութեան մառջանմ բերեմ, թը չը՝



## Գլուխդ կռունկ կուտամ:

Ասիկ կենա խեղճ ու սէֆիլ գուգայ կը տուն. կնիկը գիմանա՝ կենա մօրը քովը դրկէ կը: Փեսան կերթայ ծովին քեանարը կանչէ կը զոնքնչին դուս, աղաչէ կ'օր մէ հատմ' կակլի մեծութեան մառջանմ' տայ: Ա ա կըսէ կը թը՝ ասպէս գընը՝ մէ դևմ' ռաստ գուգայ, իմ կողմէս ըսէ անոր՝ կուտայ կը: Ասիկ ցրցուցած ճամփով կերթայ կը, մէ դոճա դևմ' ռաստ գուգայ, կըսէ խանում մարիկն ըսաց օր իմձի կակլի մեծութեան մէ մառջանմ' տաս: «Լաւ, կըսէ դևմ, քալէ կնկանըս քովը տամ»: Թիշմ' կերթան, տեսնին կ'օր մէ ուրիշ դևմ' է նստէ, մէ ծիծը ցկերը է մէ ուսը՝ մէկալը մէկալ ուսը, փութմ' ա դուրդուշուն ցկեր է բերանը չքըռ-չքըռ ծամէ կը: Աս դևմ քաշէ կը թուրն ու կնկանը գլուխը կռուէ կը. կռոհլը գիմանայ՝ արունը կակլի մեծութեան մառջան կռոած թապէ կը:

«Տէ՛, կըսէ դևմ, ժողվէ ինչքան գուզես»: Ասիկ ծոցն ու ջերօը լըլէ կը, կըսէ. «Յերիք է, ալ տեղ չումին»: Աղ վախթը դևմ ծոցէն հանէ կը եափրաղմ' ու քսէ կը կնկանը գլխուն. կնիկը օ սահաթ սաղնայ կ'ու ծամէ կը ծուրը: Տղան ուրախ ուրախ գուգայ, քանիմ մառջան կուտայ կը թաքաւորին: Թաքաւորը դիա կատոի կը, կանչէ, կըսէ կը թը՝ մարդը օր մեռաւ խազնին բալնեստանը հետը տարաւ, պիտի երթաս, բերես, թը չը՝ սաղ տեղդ անկածդ թողնին կը: Տղան կերթայ ծովին քեանարը, խանում մարիկն կանչէ կը դուս, կաղաչէ օր իրեն մէկալ աշխարքը դրկէ, երթայ մօրէն խազնին բանլինքը բերէ: Խանում մարիկը դուս հանէ կը կարմիր,



Ծերմակ, մէմա սկ ծիմ, լողացնէ, շփէ կը, ետև ա հարցընէ կը թը՝ վե՞րը կրնայ ատ տղին անթիու աշխարքը տանի ետ բե՞րնէ: Ծերմակը կըսէ կը թը՝ ես տանին բերեմ կը: Տղան նստի կը ծիուն, ծին կըսէ՝ աչքերդ խփէ ու բաց. խփէ ու բանայ կը, տեսնի կ'օր գետնին տակը մէ մութ տեղն են:


Քիչմ' առաջ կերթայ՝ տեսնի կ'օր, մէ հարսմ' տէյմ'օր բուկը ջրի մէջ խրուած՝ մէալամիշ գըլլի թը՝ ծառաւ մեռայ: Կերթայ քովը, կըսէ՝ ատ ինչէ՞նէ օր տէյմ'օր բուկս ջուրն էս խրէ ու պուտո՞ն ջուր չես կրնը խմէ: Անա թը՝ մէմ' դու առաջ ըստ ո՞ւր կերթաս:

«Կերթան օր մօրէս խազնին բանլինքը առնին տանին»:

Լաւ, կըսէ, անտեղ գնացողը եղ չի դառնայ, էակար ետ դառցար՝ կըսեմ: Յըմը տեսնին կըսեմ կ'օր մեղք ես, ա'ռ իսի էրկու խնձորը, դրնէն օր նես պիտի մտնիս, էրկու կողքը աւլանմ' ու դափլանմ' են կապած, մէկը տո՛ւ մէկին, մէկալը մէկալին նես մտի:

Ասիկ կ'առնէ խնձորները՝ կերթայ: Կերթայ, տեսնի կ'օր մէ կաշում' վրայ մարթ ու կնիկ նստել ծեծկուին կը: Մօտենայ կըսէ կը թը՝ ախր ի՞նչ էք էրէ օր ծեծկուիք կը:- Թը գընը էկէր ետ էկար, կըսենք կը:

Ասիկ ալի առաջ կերթայ, տեսնի կը կնիկմ' մէ ձեռքը կրակի մէջ, օխքը ունկանի պղինձը վրան: Ասոր ա հարցընէ կը թը՝ ինչի՞ ձեռքը կրակը դրեր վառէ կը. ան ա ալի ան կըսէ կը թը՝ անտեղ էրթըցողը ետ չի գայ, թը ետ էկար՝ կըսեմ: Քիչմ'



ա առաջ կերթայ, տեսնի կ'օր մէ ալաղափում, էրկու կուշտը  
մէ ասլանմ' ու ղափլանմ' են կայնէ, հանէ առաջի հարսի  
տուտած մէ խնձորը մէկին կուտայ, մէկալը մէկալին. ատոնք  
ետ քաշուին կը, ատիկ դուռը բանայ, մտնի կը նես: Օ  
սրհաթ աննահական հոտը բուրէ կը, տեսնի կը մօրը լուս  
կռած, անթառական ծաղիկ բոլորը բուսած: Կերթայ մօրը  
ծեռքը պազմէ, կըսէ կը թը՝ հարցս խազմին բանլինքը գուզէ  
կը: Մարը լցուի կը, գուլայ. «Խազմին բանլինքը իրեն քովն  
է, կըսէ, անիկ միտքը դրեր է օր՝ քեզի սըպանէ: Առ իսի  
եափրաղը՝ գընը, ֆէնդովմ բալքի գլոխսդ ազատես»:

Ասիկա գուլայ, կենէ թը փաթթուի, լուսիմ' պէս ծեռքէն գել-  
լէ. դառնայ կը ետ, գուգայ ան կնկանը քովը, օր ծեռքը կրա-  
կին մէջ դրեր, վառէր կը: Անիկ զարմանայ կը, կըսէ. Աֆ-  
ֆարըն տղայ, ինսընի չերթցած տեղը դու գնացիր:

Չէ, կըսէ ասիկ, դուս ան ըսէ թը՝ աս ինչի՞ ծեռքդ կը վառես:

«Մեղքս ինչ պահեն, կըսէ կնիկը, անթիու աշխարքն օր  
խապ կենէնք, կարին մէջ վիրահա ջուր խառնէի կը, հիմի  
ան է, քաշեմ կը:

Ասիկ կանցնի, կերթայ մէկալին քովը, ալի անպէս հարց  
ու փորձ կենէ. անոնք ա կըսեն կը թը՝ անթիու աշխարքը էր-  
կուսիս աչքն ա դուսն էր, սիրուն հարսմ' ըլլիր՝ ես կը սիրէի,  
սիրուն մարդմ' ըլլիր, ան կը սիրէր, հիմի ես ասոր կը ծեծեն  
թը՝ մեղքը քուկդ է, ան ա ինձի կը ծեծէ, թը քուկդ է, թող դու  
ուրիշի չըսիրէիր, օր ես ա չսիրէի:



Կանցնի կերթայ առջինին քովը. անա կըսէ կը թը՝ արտըլորին օր ջուր տանէի կը, ծառաւ ճամփորթիմ ջուր չտուի, հիմի ես ծառաւ պապակիմ կը:

Տղան կանցնի, ձին կըսէ. «Աչք խփէ ու բաց»: Խփէ կ'ու բանայ կը, տեսնի կը իրենց դռան առաջն է. գիշնի, ձին բաց կը թողնէ, կերթայ նես: Կերթայ նես՝ փաթթուի կը կնկանն գուլայ, թը հարըս ինձի սըպանել գուզէ, բանլինքը իրեն քովն է:

«Ախ, կըսէ կնիկը, դուն օր իմ փոստս թընդիր չցկէիր, ես հիմի քեզի ազատել էի»:


Տղան հանուի կ'օր քնի. տեսնի կ'օր ծոցէն բանմ' ընկաւ, վերցընէ կ'օր բանլինք: Մի՛ սէ մօրը տուած եակրաղը բանլինք է դառցէ: Ուրախնայ կը, մութէ մութանց կուտայ կը հօրը:

Դարը տեսնի կ'օր աս անգամ ա պըրծաւ էկաւ, կըսէ. «Պտի էրթաս անպէս մէ մէյմունմ' թերես, օր ինքը ըլլի մէ թիզմ', միրուքը օխթը թիզ»:

Կերթայ ալի ծովին քեանարը, խանում մարիկին կաղաչէ, կառնէ մէ մէյմունմ', գուզայ: Գուզայ օր թաքաւորը դոշունը կը խաղցնէ, տանի կը կուտայ:

Թաքաւորը կըսէ. «Տէ՛, մէմ' թո՛ղ խաղայ, տեսնիմ շնորհքը»:

Մէյմունն օր սաղ զօրքին առաջը չի՝ խաղայ, ետև գուզայ թաքաւորի առաջ կայնի կ'ու կըսէ. «Թաքաւորն ապ-



ռաստ կէնայ, հարճ օր օրդուն աշխատի սըպանէ, անոր ի՞նչ պատիժ պիտի տրուի»:

Թաքաւորը կարմըրի կը, իըմը ի՞նչ պիտի էնէ, սաղ դունը իրեն կաշէ:

«Ինչ օր գուզես», կըսէ:

«Թո՛ղ քար կռոջի», կըսէ մէյմունը:

Օ' սահաթ թագաւորը քար կռոջի կը:

Ղոշունն օր ատ հրաշքը տեսնի կը, ճուայ կը թը՝ տղին թաքաւոր գուզենք: Արթ ատ տղան կնկանը կառնէ, թաքաւոր նստի կը:

Անոնք հասան իրենց մուրազին, դուք ա հասնիք ձեր մուրազին:




Տպագրվում է Երվանդ Լալայանի «Պառավաշունչ» (Ալեքսանդրապոլ, 1911) գրքույկից (էջ 5-11): Ներիարի գրառման հանգամանքների մասին ծանոթություն չկա: Ներիարը գրի է առել Երվանդ Լալայանը:

## ԵՐԿՈՒ ԱԽՊԱՐ



Այսի չի ըլլի էրկու ախպար գըլլի. մեկը զանկին, մէկալը ֆուխարա: Ֆուխարին ալուրը պարափի կը, կերթայ զանկին ախպօրէն մէ մաղմ ալուր գուգէ կը, թզ, ախպար, մէ մաղմ ալուր տո՛ւ, դուրպէք էրթամ թերեն, կուտամ

կը: Ախպարը կըսէ կը, թզ դուն տակդ փախուցեր պոծեր ես, էսև ո՞լոտից պիտի տաս: Ֆուխարա ախպարը տուն կերթայ, կըսէ կնկանը, թէ աղջի, Ե՛լ, աւլէ ամբարին քեօշաները ու մեկ էրկու հացմ էրա', ես ֆէլս փոխել եմ, դուրպաթ պիտի էրթամ, փարայ վաստկեմ: Կնիկը կաւլէ ամբըրին քեօշաներն ու մէ հացմ կեփէ, մարթը կառնէ ատ հացն ու գըլնի ճամփայ: Կերթայ, կերթայ հասնի կը մէշիմ, գելլէ մէ ծառիմ: Քիչմ կենայ կը, կաշէ օր մէ առջմ, գալըմ ու մէմա մէ մուկմ: Գուքան կը ատ ծառին տակ: Ասոնք քիչմ հանգչին կը օրա՝ բանը եարանուրեան զարմեն կը, առջն ու գալը կըսեն մկին թը՝ հէ ի՞չ ունիս, մուկ ախպար: Մուկն ա կըսէ թը՝ կոտովմ՝ մէմ օսկի ունիմ աս ծառին տակը: Գալին կըսեն թը՝ դու ի՞նչ ունիս, գալն ա կըսէ թը, անտեղ մէ սիւրիւմ օչխար ունիմ, անոնց մէջը, մէ դօչմ կայ, հըմը՝ անպէս մէ դօչմ է, օր, ինչ իհւանդ ա օր ըլլի, անոր քեալլան ուտէ, մէկէ մէկ գելլէ, լաւնայ կը: Առջին կըսեն. Դու ինչ ունիս. ան ա թը՝ ես ան քոչին մէջ վաթցուն գիւկիւմ օսկի ունիմ: Ասոնք քիթսուն մեր մարթը ծառին վրայ կիմանայ: Եփ օր ատոնք կերթան, մուկը հանէ կը իրան օսկեստանքը արեգըկին ակը չորցընելու: Աս վախթը մարթը վար կիջնի



ծառէն, զարնէ մկին օթքը կոռու կը ու օսկեստանքը կառնէ կերթայ տուն: Ատոր էքսի օրը կերթայ սիւրիին միշէն դօչը գողնայ, կուգայ կը տուն: Սապախտանը կանչէ կը թալլալին ու թանպի կենէ, թը քընը չարսուն, ճուայ ու ըսէ թը՝ վեկ հիւանդ ունի թող բերէ, ես լաւցընեն կը: Ատ վախթը թաքաւորին աղջիկը շատ հիւանդ գըլլի: Եփ օր թաքաւորը գիմանայ, կանչէ ատ մարթուն իրեն քովը ու կըսէ կը թը՝ թ'էկէր աղջիկս լաւցուցիր, ի՞նչ օր ուզես, կուտամ կը, թը չը լաւցուցիր՝ գլոխըտ կոռեմ կը:

Մարթը, կըսէ կը, թը լաւցընեն կը: Էքսի օրը ատ մարթըն է, օխթը պղինձ ջուր կը տաքցընէ ու անքան կը երցընէ, օր օխթը պղինձ ջուրը մէ պղինձն դառնայ կը: Ետև ատ մարթը փերել կուտայ թաքաւորի աղջկանը, լողացնէ կը ատ ջրով, պառկեցնէ կը, փերէ ատ դօչին գլոխը կուտեցնէ: Երկու օր ետև ատ մարթը կերթայ կը թաքաւորին դօնադ, օր տեսնի թը հիւանդը ինչը է: Թաքաւորը տեսնելուն պէս հրամնէ հրամմէով նես տանի, նստեցնէ կը, մէ լաւմ պատիւ կուտայ, ետև կըսէ կը թը, տէ մուրատ ուզէ, մուրատ տամ: Աս մարթը կըսէ կը թը իմ մուրատս քու սաղութենդ է. Եփ օր թաքաւորը շատ զօռէ կը, արթի ատ մարթը կըսէ թը՝ ինժի պէտք է վարցուն դաւա, վաթցուն փետատ, վաթցուն մարթ: Թաքաւորը կըսէ թը ատ հէ՛չ, դայտով բան ուզէ, մալ, դովլաթ, փարա ուզէ: Մարթը ջուղա կուտայ թը՝ թաքաւորն ապշաստ կենայ, ուրիշ բան չեմ ուզէ: Թաքաւորը հրամայէ կը թը չէ, ձեռաց բիթուն ուզածնա կուտամ կը ու ատ մարթը կերթայ



քոչին միջի օսկին բերելու: Կերթան թը չը՝ մարթը կըսէ թը՝ վերցուցէք ատ քուռչը, քուռչը վերցնեն կը ու տեսնին կը վաթցուն բեռ օսկի, բառնան կը դաւաներուն ու փերեն կը ատ մարթուն տունը:

Եքսի օրը ատ մարթը դօնախմլըս կէնէ: Մարթիկը կըսեն, աս մարթը տունը հաց չունի ուտելու, մեզի հ՞նչդ կը կանչէ: Յերմէխսա բիթոտունն ա կերթան կը: Ասոր ախպարը թէնէզիկ չի էն ֆուխարա ախսօրը տունը էրթըլու, ինչևիցէ, գուգան գօռով-շառով տանին կը: Նես մտնի կը թը չը, տեսնի կը մինտրները, տան սարքն ու կարգը, զարմանայ կը, կանչէ կը ախսօրը մէ դրահ, խոստովանեցընէ կը թը՝ ասքան դուկաթը ինչդ ծեռք բերեց. ան ա չի պահէ, բիթոտուն պատմէ կը: Ասիկ օր գիմանայ, ինքն ա միտքը թնէ կ'օր դուրպար էրթայ: Եփ օր տուն կերթան, աս զանկին ախպարն է կըսէ կնկանը թը՝ հաց էկի, ես ա դուրպար պիտի էրթան, ին ֆուխարա ախպարս քնաց, մալի փարի տէր էղաւ, ես չե՞ն ըլլի:

Եքսի օրը կերթա կը ան մեշան, ու գելլէ ան ծառը, որին վրայ ֆուխարա ախպարը էլեր էր: Ատ վախթը գուքան առ-ջը, գալը ու մուկը: Առջը ու գալը հարցնեն կը մկին թը, հ՞նչի ես թթուէ, անա թը դուք օր գնացիք մէ մարթմ ծառէն իջաւ, օսկեստանս տարաւ: Գալին կըսեն դուն ինչի ես թթուէ, գալն ա կըսէ կը թը, ին սիւրիւսն միջէն դօսն գողցեր են: Առ-ջին կըսեն, դուն ինչի ես մոռութտ կախէ. անա կըսէ կը թը՝ ին վաթցուն կիւլկիւն օսկիս են տարել: Մէմա մուկը վեր կաշէ տեսնի կ'օր ծառին վրայ մարթմ կայ, իմացնէ կը առջին ու




գալին: Առջը մօմոթալէն գելլէ ծառը ու վար գլորէ կը մարթուն. Ետև վար գիշնի, իրեքը ախպար դաշնան, զանկին մարթուն կուտեն կը: Ֆուխարա ախպարը գիմանայ օր իրեն զանկին ախպօրը ջանավարները կերել են, շատ տրորւի կը, լըլէ մէ կօտն օսկի, տանի կը անոր կնկանը. Է՞հ, կըսէ, ի՞նչ էնենք, ան անոր ճակտին գիրն էր. Ես իրեն ֆուխարա վախթըս աղաչեցի, պաղատեցի, օր մէ քիչմ ինժի ծեռք բռնէր, չերաւ, ան չերաւ, իրմը ես կենա չեմ մտեհան էնէ քեզի, առ աս օսկեստանը ու ասով եօլա քընը:



Տպագրվում է Երվանդ Լալայանի «Պառավաշունչ» (Ալեքսանդրապոլ, 1911) գրույկից (էջ 12-15): Գրի է առել Երվանդ Լալայանը: Գրառման մասին մանրանասնություններ չեն հաղորդվում:

## ՕԽՆԱՎ՝ Յ



Առի չի ըլլի մէ տղամ գըլլի. աս տղան կպճի կը հօրը եախան, թը՝ ուզես չուզես թաքաւորին աղջիկը ինծի համար պիտի ուզես:

«Օղո՞ւ, կըսէ հարը, խելքտ գլոխտ ժողովէ, եօրդնիտ գեօրա օսուխտ երկնցու, դո՞ւ վէ՞վ, թաքաւո՞րը վէ՞վ։ Թաքաւորը հէ քեզի աղջի՞կ կուտայ. գլոխ գալու բա՞ն է»։ Յարը տեսմի կ'օր տղան ձուք է եղէ ջանին կպէ՛ հորին խալաս էնելու խաթեր, գելլէ կերթայ խնամախօսութան քարին կը նըստի։ Թաքաւորը խնտայ կը վրան ու գլխսն դէաֆ էնելու համար կըսէ թը՝ էկէր տղատ սև ու ճերմակը բերեց, կուտամ կը։

Յարը փոր-փոշման քուքայ տուն։ Քուքայ տուն՝ տղին կըսէ թը՝ քեզի չըսի՞ հալիտ կեցի. տիհա թափիտ դրեց, ըսաց թը՝ էկէր սև ու ճերմակը բերէ, կուտամ կը։

- Լա՛ւ, կըսէ տղամ, քալէ ինծի մէ տեղմ նօքար տու, աշխատիմ սև ու ճերմակը փերեմ։

Ասոնք երկուսը գելլեն կերթան, շատն ու քիչը Աստուած գիտէ, կերթան մէ պաղ ախապրիմ ռաստ քուքան։ Վրայ գընին մէ կուշտն ջուր խմեն կը ու օխխայ՝ կէմեն։ Օխխայ՝ կէմեն թը չը՝ ախապրիմ ակէն մէ էխտիար հալսորմ դուս քուքայ կը ու կըսէ թը ինչի՞ կանչեցիք։ Ասոնք զարմանան կը ու կըսեն թը՝ վէ՞վ քեզի կանչեց։ Թը՝ դուք Օխխայ՝ չըսի՞ ք. իմ անունս Օխխայ է։

- Յա՛, կըսէ հարը, չիտինք օր քու անունդ Օխխայ է։

- Ե, աս տղատ ո՞ւր կը տանիս, հարցնէ կը Օխխայը։



Թը՝ տանիմ կ'օր մէկիմ քով նօքար տամ:

- Ինծեն լաւին քովը չես կրնայ տայ, փէ իմ քովս տու,  
կըսէ Օխսայը:

Յարը րազի գըլի, հախը կռանեն կը. տղան կուտայ ատոր,  
ինքը գելլէ կերթայ: Օխսայը ատ մանչուն կառնէ, ախարդին  
ակէն կերթայ նես իրան օտան. ինքը նստի կը ու ատոր կըսէ  
թը՝ առ իմի թարքէն աս թուխթը, ան համայիլը փէ:


Մանչը փերէ կը. Օխսայը բանձր ձենով կարթայ կը ու կե-  
նայ կուտայ տղին, օր տեղը թնէ: Ասոր բանը սալթ ատ գլլի:  
Օխսայն օր իրեն թխթերը կարթայ կը, աս տղան ամկճները  
կախէ՝ լաւ ամկած կէնէ ու բիբտուն սորվի կը: Աս Օխսայը  
մէ ըռնտիկ աղջիկմ կունենայ. ատոր սիրտը կպչի կը աս  
տղին. գողտուց խրատ կուտայ թը՝ հարըս օր քեզի հարցնէ  
թը բանմ սորվար, չըլլի թը ըսէս սորվայ, ան սայթին գլոխտ  
զարնէ կը. հէչ մի թւացնէ թը բան գիտես:

Տղին վատան թընմի կը. հարը քուքայ օր տանի. ուս-  
տան տղին հարցնէ կը թը՝ օղուլ, հէչ ինչ սորվար:

Տղան աթը՝ ինչ սորվեցուցիր, օր ի՞նչ սորվէի:

- Աստպէս է օրա, ել քընը, կըսէ Օխսայն ու տղին ճամփէ:  
կը: Յարը կառնէ տղին կերթայ:

Կերթայ, ճամփան տղան քիշմ ետ կը մնայ ու մէ իրեղէն  
ծիմ դառնայ, քուքայ հօրն առաջը ֆոֆուակը: Յարը «Օվակ,  
Օվակ», ծէնէ կը. արի՛ իրեղէն ծիմ է եկէ, բռնենք: Օվակը ծի  
է դառէ՝ ո՞ւրտից պիտի գայ: Զին թոչի կերթայ, ալի տղայ  
դառնայ քուքակը հօրը քովը: Յարը վրան նեղենակը թը՝




ՎԵՐ ԶԱՅՆԱՄՆ ԷՒՐ ՀՔՈՒԵ, ԻՐԵԼԵՆ ՃԻՄ ԷՐ ԷԿԵ, ՔՈՎՍ ԸԼԼԷՒՐ,  
ՔՉԱՆԵԼՄԲ:

- Ե, ինչ էնեմ, մատս ֆոտ չեհ էրէ, կըսէ տղան:

Քիչմա կերթան. տղան հօրը կըսէ թը՝ քիչմ կամաց քընը  
ես ահան էկայ: Տղան կենայ ես կը մնայ, մէ կարմիր կովըն  
կը դառնայ, կերթայ հօրը քով, տոշիկ տալեն ասթին անթին  
վազգէ կը: Յարը չապալամիշ գլլի օր բոնէ չի կըրնը. տղին  
ծէնէ կը, տղայ չկայ: Կովը ծեռքէ գելլէ: Տղան քուքայ, հարը  
վրան ճուայ, բոռայ կը թը՝ ո՞ւզ չքուար, կովմ' էկաւ,  
բռնէինք, ծմեռս բոլ բոլ կրէինք, ուտէինք: Տղան ծէն չի հա-  
նե: Քիչմ' ա կանցնի՛ սիրուն օչխարմ դառնայ կը, հարը կէ-  
նայ չապալամիշ գլլի օր բոնէ չի կըրնը. բիրտան օչխարը  
տղամ դառնայ կը, կաշէ՛ Օվակն է, զարմանայ մնակը: Տղան  
առաջ քուքայ, կըսէ. «Ափա՛ր, ան իրելեն ճին ու կով-  
նա՝ օր էկան, ես էի. ըշտը ատակս հիւնրներ էմ սորվէ. կեր-  
թանք քաղաք՝ ես կենայ ծի, կով, օչխար գլլիմ' դու տար ծա-  
խէ, հընը չըլլի թը գեամը, կրկալը եա կապը հետը տա՛ս.  
ինացի օր՝ ակէար չտուիիր՝ ես կենայ քուքամ տուն. հընը օր  
տուիի՛ ալ պրժայ, ինծի ազատում չիլլի:

Կերթան տուն, տղան իրելեն ճիմ' գլլի, հարը գեամէն  
քաշէ տանի կը մեյտանը ծախսելու: Յազար ու մէկ  
միւշտարի թափին կը, սահաբւանմ մէջ ճին լաւ գնով ծա-  
խսւիկը: Յարը գեամը կառնէ քուքայ տուն:

Իրիկուն գլլի, չիլլի, մէմա աշէս տղան պուպուստ նես  
մտաւ: Մեկալ օրը կարմիր կովմ' էկաւ, հարը կենայ տարաւ



լաւ գնով ծախեց, կրկալն առաւ, էկաւ տուն: Տղան իրիկուանը կենայ ես դառձաւ էկաւ տուն:

Մէկալ օրը տղան մէ սիրուն օխչարմ դառձաւ, հարը կապը ցկեց ճիտը, տարաւ մէյտանը: Շենիկը էկաւ թոփ էղաւ օշխրին գլխուն, պազար էրաւ, զին տուեց, ան էր՝ պիտի կապէին կրտէին մէ ծերմակ միրուք փիր էստիարմ՝ էկաւ՝ մէկին տաս զին տւեց, առաւ օշխարը: Մարթը գուզէր օր կապը քանտէ հալսորը չը թողեց: «Զէ, ըսաց մարթը, կապը չեն ծախէ»:

- Սիան թեզի ասքան ա աւելի, ըսաց հալսորը, կապնա տու:

Շենիկը վրայ թափաւ՝ թը ատ կապնա ի՞նչ է, օր դողաս կը վրան, էրկու շահու բան, աշխրքին փարան կուտայ, տու էրթայ: Մարթը մէ անքամ խափուի, փարաները կառնէ օշխարը կապը հետը կուտայ, կերթայ: Աս հալսորը կառնէ օշխարը, կերթայ ախպրին ակեն նես մտնի կը. դու մի՛սէ ատիկ Օխիսայն է եղէ: «Ես թեզի մարիֆաք սորվեցուցի, օր էրթաս աշխարք քանդէ՞ս, կըսէ Օխիսայը. աղչի՛ թէգ սաթըը թեր, օր ասոր գլոխը զարնեմ»: Աղջիկը տեսնի կ'օր իրեն սիրած տղան է, վազգէ սաթըը կառնէ պատին ծակը կոյտէ կը, գընի ասթին անթին, սաքիթը ման քուքայ: Էպակի օը շուլոր կուտայ՝ կըսէ կը թը՝ չկայ, չհտեն ո՞ւր ես դրէ:

«Քոռացա՞՞ր ասօր, կըսէկը հալսորը, արի, արի օշխարը դուն բռնէ ես գտնիմ. կսկուծ բռնէ չը փախչի:

Աղջիկը բռնէ կը օշխրին կապէն, հարը կերթայ սաթըը փնտռուելու: Թիշմ' օր հեռենակը՝ աղջիկը սաքի թը օշխարը սանը պիտի կապէ. կապը ճիտը փաթթէ կ'ու բաց կը թողնէ.



հըմք ատ սահաբին օչխարը դոխ կը դառնայ ու թռչիկը: Օխխայն օր տեսնիկը թը տղամ դոխ էղաւ փախաւ, ինքնա չալաղան դառնայ գընի էտիթին: Գընի էտիթին, ան կերպայ՝ աս էտիթին. մազ մնայ կ'օր հասնի, դոխը թագ դառնայ գընի թաքաւորին գլխուն. չալաղաննա թաքաւոր կը դառնայ, գիշնի թաքաւորին առաջը, կըսէ. «Էրկինքն է էլէ, թազս ընկաւ գլոխստ, տու»: Թաքաւորը Վերցնէ կ'օր տայ՝ թագը վարդ դառնայ կը. Օխխայն ա աշըդ դառնայ, սազը կը չալէ ու վարդը գուզէ: Թաքաւորը կենէ թը՝ վարդը տայ աշըդին, վարդը ութը հատ կորեկ կը դառնայ, թափի կը վար. աշըդնա խորոգ գըլլի՝ ատ կորեկները կուտէ: Ինչո գըլլի մէ կորեկմ' թաքաւորին փեշերուն մէջը մնայ կը, խորոգն օր օխսոր կորեկը կուտէ՝ աս մէ կորեկը աղուէս գըլլի խորոգին խեխսէ կը:

Թաքաւորը մատ պոկանց կը մնայ: Խորոգին օր խեխսէ կը, թիրտան տղամ դառնայ կայնի կը թաքաւորին առաջը: Թաքաւորը կաշէ՛ ճանչէ կը օր՝ իրեն աղջիկը ուզողն էր, կըսէ. «Որթ օր սև ու ու ճերմակը փերիր. աղջիկս քեզի հալալ է, տուի օր տուի»: Արթ օխսոր զօր, օխսոր գիշեր հարսնիք կէնեն, առօք փառօք պսակեն կը: Անոնք հասան իրենց մուրատին, դուքս հասնիք ձեր մուրատին:



Տպագրվում է Երվանդ Լալայանի «Պառավաշունչ» (Ալեքսանդրապոլ, 1911) գրքույկից (էջ 16-21): Գրի է ատել Երվանդ Լալայանը: Գրառման մասին առանձին ծանոթություն կամ տեղեկություն չի տպալիս:


## ՊԻՒԼՊԻՒԼԻՆ ՐԵՔԻԱԹԸ



այ եղէ՝ չկայ եղէ՝ մէ թաքաւորմ կայ եղէ: Աս թաքաւորը մէ ժամն' շինէ կը եղէ: Շինէ պրօճիկը օրա՝ արարած աշխարհը կուգայ ատ ժամին մայիլ կը մնայ: Մէ օրմա՝ մէ էխտիառմ' կուգայ կաշէ, կաշէ, վերջն ալ թաքաւորին կըսէ կը թը՝ ժամտ լաւ է, իրնը մէ բանմ' պակաս է. թ'ակեար մէ պիւպիւմ' բերես ժամիտ մէջը պահես՝ ժամիդ ալ ժամ չի հասնի: Թաքաւորը ատ օր կիմանայ, կանչէ կը իրեն իրեք տղոցը, ու կըսէ կը թը, ձեզնեն վերն օր մէ պիւպիւլըն փերէ ինձի, ես անոր կուտամ թախտս ու աս մատնիս:

Գուգէք, գնացէք, պտղոտուէք, բալքիմ գտնիք: Իրեք մանչն ալ պատրաստութեն տեսնին, գելլեն կերթան կը: Կերթա՞ն, կերթա՞ն, խիլլասա իրեքի բաժնուող մէ ճանփամ ըռաստ կուգայ: Ասոնք աստեղ կուտեն, խնեն կը, ետքնա քարիմ' տակ մէկ-մէկ նշան դմեն կը ու իրարու խօսք կուտան, օր ես դառնալերուն անպատճառ զան ատ տեղը, նշանները տեսնին ու թ'ակեար մէկին նշանը փաստել է (ժանգոտել), անոր իմտղտին հասնին:

Ասոնք գելլեն անմեքը մէ ճանփամ բռնեն կերթան: Պղտի մանչը կերթա՞յ, կերթա՞յ, շատ ու քիչն Աստուած գիտէ, կերթայ հասնի կը մէ քաղաքմ: Կերթայ ատ տեղաց թաքաւորին ղոնադ: Թաքաւորը ատ մանչուն շատ հաւնիկը, ատոր կըսէ կը թը, արի՛, իմ մինուճար աղջիկս ա՛հ, ինձէն էտև ա թաքաւոր էղի:



Աս մանչը ռազի չի ըլլի, ու կըսէ կը թը, ինքը էկել է մտ  
պիւպիւլմ տանելու, դաշնայ աղաշանք կէնէ թաքաւորին  
թը՝ թէ օր քովդ քիշն խաթր ունին, մէ պիւպիւլմ գտի ինձի  
հըմար: Եփ օր պիւպիւլը շինեն բերեն կը, թաքաւորը կըսէ  
աս մանչուն թը՝ մտի աս պիւպիւլին մէջը, թևերը շարժէ ու  
թի քնը ֆիլան թաքաւորին տանը փանճարան կայնէ,  
անոնք քեզի նես կառնեն ու իրենց պիւպիւլին քովը պա-  
հեն կը, անոր առնելն ու փախչին ալ քու բանդ է:

Տղան ասոր ըսածին պէս մտնի կը պիւպիւլին մէջը ու  
թոչի, կերթայ, կայնի կը մէկալ թաքաւորին աղջոկան փան-  
ճարան:

Աս թաքաւորին աղջիկնա շատ ըշնտիկ գլլի, անպէս  
ըշնտիկ, օր արկին կըսէ կը Ե'լ, թը չը ես կելլեմ:

Աղջիկը պիւպիւլին տեսնիկը թը չը՝ խնդըլուն չի գիտ-  
նայ թը ինչ էնէ: Կանչէ կը հօրը, պիւպիւլը նես կառնեն, շաք-  
րով հաց կուտեցնեն, մէկալ պիւպիւլին քովը դնեն կը:

Գիշեր օր գռլի, բիթուուն քնին կը, թաքաւորին աղջիկ-  
նա մէննակ ատ օտին օրթան ցկէ կը տեղը ու պառկի կը: Եփ-  
օր քունը վրա կանցնի, աս մանչը ուսուլով գելլէ կը  
պիւպիւլին մէջէն ու քուքայ աս աղջկայ թուշը կըսկուժն  
պագնէ կը՝ ու վազգէ կերթայ պիւպիւլին մէջը մտնի կը:

Աղջիկը վեր թոչի, ճուայ կը, խալայեղները մէկալ օտե-  
ցն կուգան, կրակը վառել կուտայ, ու վախվըխելով քեօ-  
շեստանը կաշէ օր՝ իրեն պաքնողին գտնի, ինչքան




պտտիկը, տեսնի կ'օր մարդ չի երևայ, նորէն պառկի քնիկը:

Մանչը նորէն գելլէ ու առաջուրնեն աւելի կսկուծմ պագնէ կը՝ ու փախչի մտնի կը պիւլպիւլին մէջը: Աղջիկը աս անգամիս օր աւարայ տեղը ման գուգայ օր գտնի իրեն պաքնողին, ալ քունը չի տանի, սուտ քուն գըլլի, ինչ է պաքնողին բռնէ:

Քիչն կանցնի, տղան ալի չի բաքլայէ, չունքի համը բերանն է մնացէ, կելլէ պիւլպիւլին միջէն, կերթայ աղջըկայ քովը, չորի կ'օր պագնէ, աղջիկը թները ցու ճիտը, փաթրուի կը: Թեզմ կրակ կէնէ օր տեսնի թը վեվէ թռնածը, կաշէ օր, ինչ աշէ, մէ ծեյրանմ պօյով պուտով աղազադամ:

Մանչը փաթրուի կը անոր ու կըսէ թը՝ դու ինս ես, ես քեզի համար եմ էկէ: Ասոնք քիչն սիրուին կը, կաշեն օր լուսը բացուելու վրայ է, խօսք կէնեն օր էլլեն փախչին: Մանչը կըսէ կը թը՝ արի' երկուսս ա իմ պիւլպիւլիս մէջը նստինք, քու պիւլպիւլտա առնինք ծեռքերս ու թռչինք, երթանք մեր տունը:

Լաւ գըլլի, կըսէ աղջիկը, հըմը՝ հարըս անպէս մէ հաւքմ ունի օր, ակեար անոր ըստ թը ֆիլանը փախել է, քնը գտիր՝ անիկ հոգին կրակը կը ցկէ, ուր է ուր չէ՝ զարնէ սըպանէ, գտնի կը: Ասոր չարան ալ գիտե՞ս ի՞նչ է,- ան է օր՝ հարըս մէ քանիմ հատ եաղլուղ ունի, թ'ակեար եաղլուղը ծեռքդ ունենաս, հաւքին գալած վախտը ծեռացդ փուես, հաւքը կուգայ եաղլուղին վրայ կիշնի, թեզի վնաս չի տայ: Ինչ ալ օր ըստս՝




ան սահաբուն կատարէ կը: Երեկ առ եաղլուղներէն մէ հատմ տուեց իմ խալայեղիս օր վլայ՝ ըլլի օր հըլը քովը ըլլի, արի առ խալայեղին ա հետներս տանինք:

Աղջիկը կերթայ խալայեղին կանչէ, փորփիրէ, կիմանայ կ'օր եաղլուղը տահա քովն է, ատոր բարքնա կենէ կը, իրեց քով նստին կը պիւլայիւլին մէջը, մէկ ալ պիւլայիւն ա կառնեն իրենց քովն ու ծերը չը ծէքաց թոշին կը:

Սապախստան թաքաւորն օր կիմանայ թը՝ նա իրեն աղջկը կայ, նա պիւլայիւլները, ան սահաբուն արունը գլոխս կը զարնէ, կանչէ կը իրեն ան մէ հաւքը, ու կըսէ կը, թէ ուր է ուր չէ ին աղջիկս պիտի բռնես: Ղուշը դանատները բանայ կ'ու թռչի կը: Թռչի՝, թռչի՝, խիլասա անոնց հասնի կ'ու՝ վիաները քշէ կը թը չը, անոնք թէզմ եաղլուղը բանան կը: Ղուշին հերսը կիշնի, քուքայ եաղլուղին վրայ կայնիկը. մանչը քաշէ կը դաման ու զարնէ ղուշին գլոխս ցկէ կը: Ղուշին գլոխս օր ցըկէ կը, նորէն ճամփայ գէլլեն հասնին կը նշան դրած տեղը, քարը վերցընեն, տակը կաշեն տեսնին կ'օր միջակ աղբօր նշանը անպէս փաստել է, օր դու պրժար: Մանչը աղջըկան կըսէ կը թը՝ աղբարս նեղութան մէջ է, կուգա՞ս անոր իմտատ հասնինք:

Աղջիկը րազի գըլլի, էրթանք, կըսէ, ուր օր կուգես:

Աստոնք նստին կը պիւլայիւլին մէջը, հարց ու փորց էնելով կերթան: Կերթա'ն, կերթա'ն շատ գեղեր, քաղըներ կանցնին, մէնա' մէ քաղքին մէջ կիմանան օր՝ ատիկ ունեցած չու-




Աեցածը բըռիկի տուել, փչացուցելէ, ու հիմի ա դափուդարտակ մինչի բուկը պարտքի մէջ խեղտուած, մէ աղային ճորտ է դարձել:

Աստին գըմին, անտին գըմին, խիլասա ասողը գտնինկը, բիւտքուն պարտքերը կուտան, պարտքնտէրերէն կազատեն, ու կառնեն հետները ետ կը դառնան: Աս աղբօր աշքը չի վերցնէ, օր պօտի աղբարը տանի պիւլպիւլը, մէնա ատ աղջկան աչքն խմէ կը:

ճամբան մէ հորիմ քով նստին կը օրայ՝ ատ մեծ աղբարը կըսէ կը մէկալին թը, ծկակելեմ, մէմ՝ արի կախուի աս հորը պիւտըմ ջուր հանէ՛ խմենք: Պօտի աղբարը անկած կէն ու մեծ աղբօր փտած չուանով հորը կը կախուի: Աղբարնէ՛, զարնէ կոռէ կը չուանը ու աղբորը ցկէ կը հորը: Պօտի աղբարը կուլայ, կաղաչէ օր իրեն հանէ՛ աղբարը հէշ տէրը չի ըլլի՛, ու զոռով կառնէ աղջկան թռչի կերթայ տուն, պիւլպիւլը կուտայ հօրը: Յարը շատ կուրախնայ, պիւլպիւլը կախէ կը ժամը ու պատրաստութեն տեսնի կը օր, իրեն մանչուն պսակէ բերած աղջկանը հետ:

Աղջիկը եկած օրէն նա կուտէ, նա կը խօսի, մոթըւորած նստի կը վար: Յարսնեց օրն օր մօտենայ կը, տղին մարդ կուգայ աղջկանը հարցնէ կը թը՝ ինչի՞ ատպէս խեղճցեր, կուրկուրի ծագ ես կտորել: Աղջիկը ալ չի համբիրէ, բանայ կը բերանն ու եղած չեղածը պատմէ կը ու գուլայ:

Թաքաւորն օր ատ գիմանայ՝ աղջկան ասկեար կուտայ,



օր էրթայ բերէ պղտի տղին: Աղջիկը ասկըրին գլոխը անցած կերթայ գըտնի կը հորը, նես կաշէ, տեսնիկը՝ օր իրեն անուշ եարը մէ կոխսքին ընկած հոգուն հետ է: Ալ չի հաճբիրէ սեր ու սէվտայէն, սրտին կրակէն վար կը կախուի, հանէ կը անոր դուս, ձեռքը քսէ փթած տեղերը կը սաղցնէ, կառնէ կուզայ տուն:

Հարը օխտն օր՝ օխտը գիշեր հարսնիք կէնէ, աս էրկուս սին պսակէ կը, ետև օրթանճա տղին ծեծէ, տնէն վրնտէ կ'ու՝ իրեն թախտն ա կուտայ պղտըկին:

Անոնք հասան իրենց մուրազին, դուքա հասնիք ծեր մուրազին:



Տպագրվում է Երվանդ Լալայանի «Պառավաշունչ» (Ալեքսանդրապոլ, 1911) գրքում (էջ 22-27): Գրի է առել Երվանդ Լալայանը: Գրառման վերաբերյալ այլ տեղեկություններ չկան:

## ԾՈՎՈՒ ԱՂՋԻԿՅ



ար չկար պալըգծի Ահմետըմ կար:

Այս մարդը ամեն օր կէրթար ձուկ բռնելու:

Օրըմ գնաց ձուկ բռնելու, բռջին մեջը մեկ  
հատ տաշտեկոնակ ինկավ: Տուն բերեց,  
դրեց իրեն տոլապը:

Ամեն օր տանը համար միս կը գներ, տունը դներ, որ իրի-  
կուն գա եփե ուտե: Ետ կը դառնար տուն, կը տեսներ որ մի-  
սը էփված, տունը ավլած ժողվված, մաքրված էր: Քանիմ  
օր ասպես տեսնելով, մարդը շատ կը զարմանար, աղոր հա-  
մար միտքը դրեց պահ մտնել և տեսնել, թե ո՞վ է իր տունը  
հոգացողը: Գնաց փաթթվեցավ խսլին մեջ ու պերլեմիշ  
ըուավ: Տաշտեկոնակի մեջ գտնվող ծովու հուրնիկ իրեղեն  
աղջիկը դուրս ելավ տոլապեն, պաշլայեց ավլել, մաքրել:  
Թոնիրը վառեց, կերակուրը պատրաստեց, քիչըմ ինքը կե-  
րավ, մեկալ մնացածը դրեց թնտիր՝ ծկնորս Ահմետի հմար:  
Գործը պրծնելեն վերջ, եբոր տոլապը պիտի մտներ,  
Ահմետը իր պահվոտած տեղեն դուրս ելավ, մեկեն բռնեց  
ու հարցուց.- Ինս ե՞ս, թե ջինս,- այսինքն մա՞րդ ես, թե սա-  
տանա:

Աղջիկը ըսավ.- Ես մարդ եմ:

Ահմետը եբոր աղջիկը տեսավ, հավնեցավ ու իրեն կնիկ  
առավ:

Օրըմ կնիկը բաղնիք էրթալ ուզեց, Ահմետին ըսավ.- Գնա  
ծովին քեները կայնի ու ճվա. «Քուրզդ նալընները գուզե»:




Ահմետը գնաց, ջուխտըն ոսկի նալըն առավ, բերավ կնի-  
կը հագավ, գնաց բաղնիք:

Շատրվանից ջուր հանած վախտը, նալընին թեքը ըն-  
կավ ջրի մեջ կորավեցավ: Շատ փնտռեց, ամա չը գտավ, թո-  
ղեց տուն էկավ:

Ադ օրը թագավորի ձիանքը բերին շատրվանին վրա  
ջրելու, ձիերը ջրին մեջը նալընի փայլը տեսնելուն պես  
խրտնեցան, ջուր չ'խմեցին: Շառան զարմացավ ու տես-  
ավ, որ ջրի մեջ ոսկի նալընը կա: Համճա հանեց, տարավ  
թագավորին տվեց: Թագավորը տեսնելուն պես զարմա-  
ցավ, թե ո՞վ պիտի ըլլի այդ կնիկը, որ էղպես ոսկի նալըն  
ունենա: Այդոր համար, հրաման հանեց, որ օխտը օրեն  
գտնին նալընին տերը:

Վեզիրներից մեկը առավ նալընը, փաթթեց բողչային  
մեջ ու պաշլայեց քաղքի տները պտտիլ: Վեց օր իրար վրա  
տները պտտեց, ամմա չկրցավ գտնել: Օխտն օրեն հետո  
գնաց Ահմետի տունը և աղաչեց կնկան, որ իրեն տեղըն տա  
նամազ ընելու: Թենպես ըրավ, որ բողչան չի բանա: Կնիկը  
ետևե էղավ, թե բողչի մեջ հ՞նչ կա: Զարմացավ եք տեսավ  
իր նալընը:

Վեզիրը աղոթք ընելեն վերջը երոր գուգեր երթալ, Ահմե-  
տի կնիկը լավըն ծեծելով դուրս փանդեց՝ իր նալընը գողնա-  
լուն համար: Վեզիրը անճախ փախավ ու գնաց թագավոր-  
ին իր գլխի էկածն ու Ահմետի կնկան հուրի ըլլալը պատմեց:



Թագավորը եք իմացավ աղ բանը, մտածեց Ահմետին մե ղայտայով գլուխսն աղել տա ու կթիկը առնե իրեն:

Անմիջապես հրաման ըրավ, որ Ահմետը բերեն իրեն քովը:

Ծառաները գնացին Ահմետին կանչեցին, թագավորը ըսավ.- Գնա' ֆիլան երկրի թագավորի աղջիկը ինձի ուզե:

Ահմետը հազրովրավ, առավ իր շունը ու գնաց: Շատ գնաց թե քիչ, ճամբուն մի փատ կոտրողի ռաստ էկավ, որ անշափ ուժով էր, որ ծառը քոքեն կը հաներ: Բարև տվավ ու ըսավ, որ ինքը կերպ թագավորին համար աղջիկ կը բերե կը: Փատ կոտրողը ուզեց, որ ինքն ալ ընկերանա: Երկուսը մեկ տեղ ընկան ճամբա ու գնացին: ճանապարհին ռաստ էկան մե հատ չալդընու:

Չալդընին ըսավ.- Բարև ձեզ, ախարտիքս, ո՞ւր կերթաք կը:

- Կերթանք թագավորին համար աղջիկ բերենք:

- Է՛, ինձի ալ հետերդ չե՞ք ընկերացնի:

- Ինչի՞ չէ, գուզես կը, արի,- ըսին:

Երեքք մեկտեղ ճամբա ինկան:

Յանդիպեցան մի ուրիշ ճարդու, որը ինչափ ֆոնից հաց ելներ, պիթյունը կուտեր, կենե կըսեր կը. «Ա՞յս մե սոմին, վաշ՝ մե սոմին»: Են ալ հարցուց. - Ախաբեր ջան, ո՞ւր կերթաք:

Ըսին.- Կերթանք մեր թագավորին աղջիկ բերելու:

Ան ալ ըսավ.- Ինձի ալ հետերդ չե՞ք տանի:

Ահմետն ըսավ.- Ախաբեր ջան, դու ֆոնից ելած պիթյուն



սոմինը կուտես կը, կենե կըսես. «Ա՞խ մե սոմին, վա՞խ մե սոմին», մենք քեզի էղչափ հաց ո՞ւրտից գտնինք:

Ֆռնձին ըսավ.- Ես ձեզնից հաց չեմ ուզե, մեննակ թե ինձի ալ ձեզի ընկեր էրեք:

- Շատ լավ, օր անպես ա ա'րի:

Շատ գնացին, քիչ, մի օրվա ճամբա մնաց, որ հասնեն էն թագավորին տունը: Էդ գիշեր գնացին մեկ պառավ նանեի տունը իջան: Յաց կերան, հանգստացան: Պառավը հարցուց.- Ո՞ւր կէրթաք ախառտիք:

Ահմետն ըսավ.- Կէրթանք կը, ձեր թագավորին աղջիկը մեր թագավորին ուզելու:

Պառավն որ աս իմացավ, ըսավ.- Կսկիծ չէ՞ ձեզի: Ինչքան մարդ էկեր է մեր թագավորի աղջիկը ուզելու, թագավորը տարեր է վիշապի օդան, անտեղ վիշապը ուզողներուն կտոր կտոր ըրեր, կերեր է:

- Ե՛, ա՛յ մերիկ, ի՞նչ ընենք, ուզենք, չուզենք պիտի էրթանք:

Պառավը ըսավ.- Ան որ աղպես է, ինձի ալ հետերդ տարեր:

Սապախտան մեկտեղ գնացին թագավորին աղջիկն ուզելու: Թագավորը տարավ վիշապի օդան ու վիշապը բաց թողուց որ ամենքին ուտե:

Ահմետը տեսավ որ իրենց պետք է ուտե, ըսավ.- Կեցեք, առաջ շունը թողնենք, թող ուտե, վերջը՝ մեզի: Շունը մեկեն հասավ վիշապի թկեն թռնեց, խածեց, խածմըծեց վիշապին սատկեցրեց:



Թագավորը եքոր տեսավ, որ տուզադը չ'ընկան, ըսավ.-  
գնացե՛ք, էքվան արեք:

Պիթյունը մեկտեղ էկան տուն: Պառավը, որ ֆալճի էր,  
ըսավ.- Ախարտիք, էքվան մեզի թագավորը աղուլի գարա  
պիտի ուտեցնե:

Չալղըճին ըսավ.- Ադ իմ բանն է, եքոր սեղան նստանք,  
ես իմ չալղին կը զարնեմ, դուք կերակուրի ամանները  
փոխեցնե՛ք:

Էքսի օրը գնացին աղջիկը ուզելու: Թագավորը ըսավ.-  
Արե՛ք, մի հաց ուտենք, վերջեն աղջիկը առեք, գնացեք:

Եքոր սեղան բերին, չալղըճին ըսավ.- Թագավոր ապ-  
րած կենա, իրաման տո՛ւր, չալղին զարնեմ:

Թագավորը իրաման ըրավ: Են վախսող, որ չալղըճին կը  
զարներ, թագավորի խելքը չալղին գնաց, մեկալ ընկեր-  
ները կերակուրի ամանները փոխեցին: Չալղին լըմննալեն  
վերջը, պաշլայեցին ուտելը: Թագավորն ու թագուհին աղո-  
ւի կերակուրները կերան, մեկալները՝ լավ կերակուրները:  
Թագավորը տեսավ, որ խարվավ, մեկեն կաթ բերել տվեց,  
խմեց ու լավացավ, հետո միսաֆիրներուն ըսավ.- Էսօր ալ  
չեղավ, էքվան արեք, աղջիկը կուտամ կը:

Իրկուն էկան: Կախարդ պառավը նորեն աշեց իր ֆալին  
ըսավ.- Ախարտիք, էքվան թագավորը 40 պոինծ փլավ պի-  
տի էկե՛ էկեր կերաք՝ լավ, էկեր չը կերաք՝ ձեր գլուխը կը  
կտրէ կը:



Սոնին ուտողին քեֆն էկավ.- Ախապար,- ըսավ,- աղկից դոլայ բան հ՞նչ կա:

Եքսի օրը կենե գնացին թագավորի քով: Թագավորը ըսավ.- Մեկ շերթ ունին ձեր քով, էկեր կատարեք, աղջիկը կը տամ, էկեր չը կատարեք՝ ձեր գլուխը կը թոցնեմ: Քառսուն պղինձ փլավ էփել եմ տվե, բոլորը պետք է ուտեք:

Ֆոնճին երոր իմացավ, ըսավ.- Կեցիր մե ես երթամ համտես անեմ զամ:

Գնաց աշխանեն պիթյուն կերավ, ամսմերն ալ թեմեզ սրբեց, պեխերը ոլորեց, էկավ թագավորի մոտ ըսավ.- Յրամանդ կատարեցի:

Թագավորը եր իմացավ, թե պիթյունը կերեր է, ըսավ.- Գնացեք, էքվան էկեք, աղջիկս էսսա կուտամ կը:


Կենե գլխները կախ թողին գնացին: Պառավը ֆալին նայեց, ըսավ.- Ախապտիք, էքվան թագավորը ձեզի պիտի տանի քաղքեն դուրս, թովի պիտի կապե:

Փատ կտրողը որ իմացավ պառվի ըսածը, ըսավ.- Դուք էքվան մե հատ չվան առեք, ես քաղաքը կը շալկեն, կը տանեմ կը սարին գլուխը կը դնեմ:

Մեկալ օրը, գնացին թագավորին քով, որ աղջիկը տա:

Թագավորը ըսավ.- Երթամք մե քիչըմ պտտինք, թախքի կերակուրը հազըր ոլլի, գուքանք կուտենք կը, կառնեք աղջիկը կերտաք կը:

Ելան մեկտեղ գնացին քաղքեն դուրս: Եր տեսան, որ թա-



գավորը իրենց սպաննել պիտի տա, փատ կտրողը դվանը  
ձգեց ու քաղաքը վերցուց, տարավ սարին թափին դրեց:

Թագավորը տեսավ, որ ճար չկա, ըսավ.- Քաղաքը տեղը  
դրեք, աղջիկը առե՛ք, գնացեք, ամա ծառ կտրողը խապուլ  
չերավ, ըսավ.- Թող անոնք աղջիկը առնեն էրթան, ես  
քաղաքը իր տեղը դնեմ կը:

Թագավորը տեսավ, որ ալ ճարը չկա, տվեց աղջիկը,  
առան գնացին: Եբոր քիչըմ հեռացան, ծառ կտրողը քա-  
ղաքը տեղը դրավ ու հասավ ընկերներուն:

Են վախտը որ պիտի բաժնվեին իրարմեն, պառավը Ահ-  
մետին դասդեմ մազ տվավ ու ըսավ.- Եբոր նեղը գընկնիս,  
առ մազերը վառես կը, քեզի օգնական շատ գինվոր գուքա:

Ահմետ առավ առ մազը, դրեց ջեպը ու աղջիկն առած  
գնաց իր թագավորին: Աղջիկը բերեց թեսլիմ ըրավ թա-  
գավորին, ամա թագավորի միտքը աղջկան բերելը չէր, Ահ-  
մետի կյանք կորսնցնելն էր: Աղոր համար իրաման ըրավ,  
որ Ահմետը զնդան նետեն: Յրամանը կատարեցին. Ահ-  
մետը զնդանի մեջ շատ օրեր կենալեն վերջը, օրըմ պառվի  
տված մազերը միտքը ընկավ, ամնա կրակ հանեց ու  
կպցուց, մեկ ալ տեսնես սաղ քաղաքը լցվավ զին-  
վորներով:

Բոլոր ժողովուրդը քաշվեցան իրենց տները, մե տղա  
կար դուրս, զորքերը հարցուցին. «Ո՞ւր է Ահմետը, անոր տե-  
ղը մեզի ըսե», տղան տարավ զնդանը ցույց տվեց:



Չորքերը զարկին զնդանի դրմերը կոտրտեցին, Ահմետին դուրս հանեցին: Ահմետ իր օգնական գորքերով հարձակվեցավ անիրավ թագավորին վրան, սպանեց անոր ու ինքը անոր տեղ թագավոր էղավ:

Տեհ, տղաք, քեֆ արեք, Ահմետը հասավ իր մուրադին,  
դուք ալ հասնիք ձեր մուրադին:



Տպագրվում է «Դայ ժողովրդական հեքիաթների» IV հատորից (Երևան, 1963, էջ 399-403): Գրաժանն ձեռագիրը պահպանվում է Բանակիուսական արդիվեհման Երվանդ Լայանի ֆոնդում, գործ 1, N 899): Ձեռագիրի վրա դրված է «Ե. Լուսանի Խմբաշավ» կնիքը: Ձեռագիր առաջին էղի վրա գրված է: «Եղագումի բարբառով, հավաքեց Արուաշեն Բարսեղյանը 1915 թ. 8/12 - Երևան»: Գրաժանն հանգամանքների մասին ոչ մի այլ տեղեկություն չի հաղորդում

## ՄԻՍՈ



ա էղե, չկա էղե մե թագավորը կա էղե: Ադ թագավորը մե օրմ գելլե թապտիր պտըտի կը:

Մե քաղրիմ չարսուին միջեն անցնելու  
վախտը՝ ինչըս գռլի, մտնի կը սամարձում  
խանութ: Աս սամարձուն էրածը թագավորին  
շատ զարմացնե կը:

Ադ մարդը օր գիշեր կաշխատիր էղե, շատ ըռնտիկ, զար-  
դարանքով սամարներ, այարներ շինե կը էղե, ու վերջը նորեն  
շինածները ջարդե, կտոր բրտուր կէնե վար թափե կը էղե:

Թագավորը տեսմի կը օր ադ մարդը մե դարդու ունի օր  
ադպես կէնե, ադոր շատ կաղաչե կ'օր իրեն գլխուն էկածը-  
չէկածը իրեն պատմե:

Սամարձին, քանի թագավորը կաղաչե, անքան կամըր-  
նա, չի ուզե օր պատմե:

Արթող թագավորն օր ծութ գռլի կպչի կը, սամարձին  
տեսմի կ'օր ճար չկա, պաշլայե կը գլխուն էկածը պատմել:

«Ես գեղացի եմ, անունս Միսոն է, ունիմ մե մարմ, էրկու  
հատ ա ախպար: Մենք պզտիկ էինք օր հարերնիս մեռավ:  
Տեսանք օր՝ օր ավուր ֆուխարութենը փաթթե կը, ամեն մեկ  
ախպարս մեկ-մեկ գործի գնացին, ես ա մեր գեղացոց դա-  
վաները արժեի կը:

Մե օրմ ա կենա սապախտան կանուխ դավաները տա-  
րեր էի չայիրները արծելու, ես ա ելեր բանցր տեղմ նստեր  
բոքոն կուտեի: Աշեմ իրեք մարդ գուքան: Ասոնք քալով, քա-



լով ինձի մոտեցան, անուշ քարև տվին, քովս նստան ու սկսան ինձի բաներ պատմել: Ետքն ա ըսին, թե. «Օղուլ, դու աստեղ դավա արծելով ի՞նչ պիտի ըլլիս, գուզես քալե էրթանք մեզի հետ, մենք քեզի մեծ փառքի կը տիրացնենք:

Ադ խոսքերն օր իմացա, խնդրուց վեր վեր թռա, գիտեի թե աստված է դրկե ադ մարդոցը, օր ինձի ադ տանջանքներուն մեջեն պրծըցնեին: Խոսք տվի ու շատ մա շնորհակալ էլա, օր ինձի հընար աղպես լավութեն գուզեն: Ետև աղոնց միջեն մեկը, օր ամենքեն մեծն էր, ծերնակ միրուքով գլգլան էստիար, դարձավ ինձի ըսավ թե.- Դե օղուլ, եփ օր գուզես մեզի հետ զալ, դավաներեղ մեկը առ օր էրթանք, օսկի արծաթ ու անգին քարեր բառնաս բերես:

Օսկու, արծթի ձենն օր իմացա, խելըոի պես չը գիտցա, թե ինչ էնեմ: Ինչ օրա դավաներու մեջեն ամենքեն լավը ջոկեցի, հետերս առանք ու ճամփա ընկանք: Շատ գնացինք, քիչ գնացինք, աստված գիտե, գնացինք հասանք մե մեծ կանընչոտ տեղորմ: Արտ ըսեմ արտ չէր, պախչա ըսեմ՝ պախչա չէր, դրախտոյ չեմ տեսե, հընը գիտեն օր դրախտոյ ադտից լավ չէր ըլլի: Մեջեն հազար տեսակ անուշ ծաղկներու հոտ գուքար:

Ադտեղեն քիչըն ա առաջ քնացինք չքնացինք, մե մենք դուլամ էրկցավ, անքան դոժա էր օր գիտես թե ծերը երկնքին էր հասեր, մարդ վրան օր կաշեր օհմորի կը: Գնացինք ադոր տակը հասանք, նստանք քիչըն հանգչեցանք, ետև ադ մարդոցեն մեկը ինձի ըսաց թե.




- Ահա, օդուլ, քու ուզած դովլաթի այսի դուլային թափան է, մենք դավան մորթենք կը, փորը դարդենք քեզի մտցնենք կը փորին մեջը, բերանն ա կսկուց կը կարենք: Ետև երկնուց մենք հավեր գիշնին, քեզի դավին հետ բանձրցնեն կը տոր դուլային ծերը, անտեղ դուս գուքաս ու ինչքան օր գուզես օսկի, արծաթ, քարեր ժողվես վար թափես կը, եփ օր բիտուն, էլած-չեղածը վար լոլես՝ իշնելու ճամփան քեզի սովորցնենք կը, գուքաս, ախպոր պես հալալ փայ կէնենք:

Ֆար չկար, պտի անկաջ էնեի: Աղոնք դավան մորթեցին, փորը դարտկեցին, ինձի ա մտցուցին փորը ու բերանը կսկուծ կարեցին, իրենք ա քնացին գողտուկ տեղմ պահ մտան:

Մեմ ալ շատ անցավ, քիչ անցավ, երկնուց մե դաթեն օրոտումով հավերը թափան, վար դրին ու սկսան դավին միսը ուտել քըցըցել: Անքան քըցըցեցին օր չոր օսկորները մնաց: Մեմ ա հավերեն մեկը կտուցը անպես զարկեց օսկորին, օր օսկոռը ծակավ ու հավքին կտուցը թես մտավ: Ալ կսկուու չկրցա դիմանալ, ճվալով օսկորներեն դուս արծա: Եփ օր աչքս չբացի ու դկի քիսպըթով հավեր չը տեսա՝ խելքս կորուցածի պես թլափիշ ըմկա:

Քիչըմ վախտ անցավ՝ խելքս գլոխս էկավ, չորս բոլորս աշեցի, տեսա օր ալ ինչ, ինչ տեսակ թանկ թանկ թաներ, օսկի գուզես, արծաթ, ալմաս, յաղութ, զմրութ: Խելքս աղոնց էի տվե՛ աշեմ վարեն ճվան կը թե.



- Թեզ էրե, վար թափե էղած չէղածը, մի ուշանա, թե չը հավքերը կենա գուքան քեզի կուտեն:

Եփ օր ադ խոսքերը չիմացա՞՝, մազերս փուշ-փուշ էլան, հըմը հավար, հավար վար թափեցի, իմչքան օր կրնայի:

Աս վարի մարդիկն ժողվեցին, ակտունանքը լրցին հապիկյաները, մեմ ա աշեմ քարվանըն էկավ, ասոնք ինչօր կար չկար դավաներուն բարձին, ճամփա ընկան:

Ես է վերեն բաքլայեմ կը, թե ինձի իիմի վար կը տանին, աշեմ օր չէ: Արթոր ասոնց սկսա աղատել, պաղատել, հըմը հեչ քաֆարատ չի էնե, թոփ թապլես չի հասնի:

Տեսա օր ալ ճար չկա, ինչ էնեմ, ինչ չենեմ, վերթին կաշեմ ճամփա չկա, հըմը եփ օր կենա չորս բոլորս թափթփած ակներ չե՛մ տեսնի, սիրտս քիչն բացվի կը, ես ինձի գյունան կուտամ:

Էդօր իրիկուն ադտեղ մնացի, արթըլ փորս վեց-վեց էրավ, անոթութենք սխմեց, հաց ուտել գուգեն հաց չկա: Ալ հոգուս հասավ: Դավին միսր կտրեցի, առանց կրակ, հում հում կտորմ կերա: Ինչ էրկնցնեմ, ադպես օխտը գիշեր մնացի ադտեղ, ալ շվարեր էի, չունիք բան չէր մնացէ ուտելու, կըսեի թե յա ասօր, յա էքվան անոթութենես մեռնիմ կը: Ադպես մտորեի կը, մեմ ա աշեմ, ուրտից էր ուրտից չէր մե ադվեսըն դուս ապծավ, ինձի տեսավ թե չէ՝ կենա էկած ճամփան բռնեց ու փախսավ: Ես ա հավար, հավար ակտունանքներեն խեյլըն ջեպս լրցի ու ադվեսին ետըթեն փորքշի կերթամ: Տեյ խեյլ տեղ ադպես գնացի ադվեսին ետըթի-



Ես, մեմ ա աշեմ աղվեսը ամուրըն ճվաց, հասկցա օր լուս  
աշխարհը է ելե, ես ա ձեռքերովս քիչըն հողը փորեցի, լուս  
աշխարհիքի երես տեսա:


Տոր դուկին տկեն դուս ելա, անպես էղա օր, գիտեմ թե մո-  
րես նոր աշխարհը էկա: Եփ օր բոլորս չեի աշե՝ խելքս  
գլխես կերթար, արթըդ անոթութենես աչքերըս պըլղըրտեր  
կը, չորս բոլորս կաշեի, թե բանմ գտնեն ուտելու: Կենա  
աստված ընծի չէր մտեհան էրե, դավին մսի կտոր-  
տանքներեն մնացեր էին գետնին երեսը, ադոնցով նախ-  
սամ կշտացա, պաղ ջուրմ ա խմեցի ու ճամփա ընկա, ես ա  
չիտեի, թե ուր կերթամ: Իրեք զօր, իրեք գիշեր էրթըլով հա-  
սա մե տունըն, դուռը ծեծեցի, մի պառավմ դուռը բացեց, ին-  
ծի նես տարավ: Նես մտա տեսնիմ մե ըռնտիկ, ճերմակ մի-  
րուք էխսիարմ օծխին գլոխը նստեր չիպուս քաշե կը:  
Աղոնց հետ խոշ բաշ էրինք, հաց բերին կերանք, գիշեր  
էղավ, քնացի քնելու, ուրտեղ օր ինծի տեղ էին ցկե:

Աղ գիշերը հանգիստ անցավ: Սապախստան եփ ծեզը բաց-  
վավ, նորեն ելանք վեր, արթըդ անոնք ինծի հարց ու փորձ  
էրին: Ես ա ինչ օր գլխուս անցեր էր մեկ, մեկ պատմեցի:

Աղոնք եփ օր իմացան իմ դուլային թափան օխտը օր  
օխտը գիշեր մնալս մատ պոկաց մնացին, չունքի ըսին թե.

- Աղտեղ անպես տեղ է, օր հեչ աղաթ չէ օր մարդ սաղ  
պրծնի աղ հավերուն ճանկերեն:

Ետև ա ըսին թե.- Աղ դուլան ա օր կա, իին կուռքերուն գե-  
րեզմանն է, ինչքան օր կուռք է ելե, աղտեղ են լցե իրենց



ունեցած չունեցածովը, ան հավքերն ա օր կան թևավոր դներ են, օր ադր մուղաթ կենան կը, չեն թողնե ինսան օղլանի մոտենալու:

- Օղուլ, - ըսաց ադ մարդը, - քուկդ մե հրաշք բանըմ է, օր ադտից ազատվեր ես: Եհ, եփ օր դու ադքան դոչադ ես էղե, թե գուցես արի մեզի տղա էղի, մենք առանց տղի ենք մնացե, դու արի մեզմով միսիթարվե, մենք ա՝ քեզմով:

Ադ օրեն ես ամոնց տղա էղա:

Անցավ մե քանիմ վախտ, տեսան օր ես սանյաթ չիտեմ, տարան ինձի մե սարածիմ քով ուստա տվին: Քանիմ տարի ետև սանյաթ լավ սորվա:

Մե օրմ կանուխ քնացեր էի մեր տանը բախչան պտտելու: Աշեմ վերեն իրեք դոխ գիշնին, հըմը ինչ դոխ, աչք պիտի ըլլիր՝ օր տեսներ, բերան պիտի ըլլիր, օր պատմեր, անկաջ պիտի ըլլիր, օր իմանար, ինչ օրա, ասոնք օր վար իջնելու էղան պախչան, ես պահ մտա ծառին քոքին տակը:

Ասոնցեն էրկուսը իջան, մեկալը չէր իջնի, կըսեր թէ՝ մարդու հոտ գուքա, աստեղ մարդ կա: Ընկերները շատ հերսուան թէ՝ անքան օր մեննակ դու հոտ կառնիս: Նայիսա իջուցին վար, ես հեռվեն սեյր կենեի, հըմը ալ հոգիս բնեն ելավ, աշեմ օր, ի՞նչ, աս դոխերը վրայի փետուրները հանեցին, մեկ մեկ ամնաման, իրեշտակի պես ըռնտիկ աղջկի դառան, մտան հավուզը լողացան, ես է իրմը չպիսի ճորով ադրոնց մեկին փետուրները քաշեցի ինձի, վերուցի պահեցի:



Ասոնք լողացան պրծան, ելան փետուրները առնելու,  
էրկուսը հագան քընացին, մեկը չպլաղ մնաց: Ասթին գընի,  
անթին գընի, չի կրնը գտնի, ես ալ չը դիմացա, էրևա աչ-  
քին, ըսի.- Իմ քովս է փետուրներդ, հըմը չեմ տա:

Ասիկ ինձ կաղաչե, ես հեշ անկաջ չերի, գնացի մեր  
տնեն մե ձեռքմ լավ մարգրիտներով կարած հալավմ բերի,  
ասոր հազցուցի, տարա տուն:

Քանիմ օր անցավ, ասոր հետ պսակվա: Օխտը զօր, օխ-  
տը գիշեր քեֆ էրինք, հարսնիքը պրծանք:

Քանիմ տարի անցան, ան մարդիկն օր ինձի հոգլորդի  
էին էրե, էրկուսն ալ մեռան:

Անոնցեն ետև աղտեղ մնալս էլ նաֆիլա էր, չունքի մարս  
ու ախարտիքս միտքս գընեին՝ մոլիսը քթիս պընչըներեն  
գելլեր, ալ բանիմ չաշեցի, տունս ու պախչաս ծախեցի,  
ծխեցի, կնկաս հետ ճամփա ընկա, զօր, գիշեր քնացի՝ քառ-  
սուն օրվան հասա մեր գեղը:

Խեղճ մարս շատ լայլուն, տրորվելուն էրկու աչքերն ա  
քողցեր էին:

Թախ մորս քովը գալը կնիկս բերեր էր իրեք տղա: Աղոն-  
ցեն մեծը շամ լակոտ էր, օրթանճան խոզի ծագըն, անմեն-  
քեն պատիկը, օր աղջիկ էր, կատվի ծագ էր:

Ադ վախտերը կնիկս շատ աչքես ընկեր էր, չի ուզեր օր  
վրան աշեի, էրեսն օր կաշեի, գիտես թե գրողըն դեմս գելլեր:

Ավուր մեկը կնիկս ինձի ըսաց.



- Քա, ինի իմ հավքի թեպուլներս պահե՞ր ես նե տու, ես անոնցով մորդ աչվիքը լավցնեմ:


Ես հավատալով կմկանս խոսքին, վերուցի տվի: Աղ օրն անցավ, էքսի սապահստանը աշեմ օր կմիկս չկա, անոր տեղը մե դոխըմ կայներ է իրեք ծագ ա հետը: Աղիկ իջավ մորս աչքերուն, թրջեց, թեպուլովը սրբեց, մեմ ա մորս աչվիքը բացվան:

Դոխը ծագերուն հետ քնաց կայնավ փանջարեն ու ըսաց թե.

- Թ'ակար դու մեզի գուզես, հազի էրկրե օտըման, առ էրկրե դրգանակ, գլոխսդ դի էրկրե քյուլլահ, ճամփա ընկի, պտըտի, տոր ասոնք մաշի, եփ օր մաշավ, մեզի գտնիս կը: Աս ըսելն ու ծագերու հետ թռնելը էրթալը մեմ էղավ:

Ես ամեն ինչ հասկցա, հըմա ալ ինչ պիտի էնեի: Աղ օրը տոր իրիկուն նստեր գուլայի կը, մեկալ օրը ալ չհամբերեցի, գնացի հագա էրկրե չարուխս, առա էրկրե դրգանակըմ, գլոխս ա դրի էրկրե քյուլլահըմ ու ճամփա ընկա: Գնացի, գնացի շատ ու քիչը աստված գիտե, հասա ջոհմ քանար: Աղտեղ իրեք ախսպար իրար հետ կռվեին կը: Ինձի օր տեսան, կանչեցին ու ըսին թե.

- Մենք իրեքս ախսպար էինք, մեր հարը մեռավ, այս իրեք բանը թողեց. մեկը այսի էրկրե փափաղն է օր վեվ ծածկե, մարդ չի տեսնի անոր, մեկն ա այսի էրկրե չարուխներն են, օր վեվ հագնի՝ դախսվանն մեջ քաղըներ, ծովեր կանցնի, մեկն ա այսի կարպետն է, անպես օր, ինչ օր չուզես՝ ասոր



միշեն գելլե կը: Յիմի մենք չիտենք, թե ասոնք ինչը՞ բաժնենք, թեզի աստված էր հասուցե իմի դու պիտի բաժնես մեզի:

Առ բաները իմացա, ալ ես ինձի կորուցի, աշեցի օր ինձի շատ չարե փրկեն կը, սատանութենըն մտածեցի, ըսի թե.

- Ես յայեղս թապլեմ կը, առաջինը վեվ օր բերե՝ փափաղը անոր, Ետև մեկալըն ա չարխները, Վերջինին ա կարպետը:

Ասոնք իավճան խոսքիս: Յայեղս թապլեցի ու իըմը իմոնքս վար թափեցի՝ ադոնց քյուլլահը գլոխս դրի, չարխները հագա, կարպետն ա վրես առա ու հայ դե, օդին միշեն թռչելով անպես կերպայի օր թոփ ըլիր չեր հասնի, հավը ըլիր՝ չեր կրնա թռչի:

Թռա, թռա, մեմ ա դեմս մե տունըն էրևաց, տունմ, անպես տունմ, օր պատերը օսկեցե էր, վրան ալմաս ու յաղութ:

Գնացի ադոր դրան առաջը կայնա՝ չարխներս հանեցի, կամաց, կամաց նես մտա, ինչ տեսնեմ, կնիկս ու իրեք տոյա: Նստեր հաց կուտեն, ես ա զնացի, անոնց սուֆրին նստա, հետները հաց կուտեի կը: Կնիկս քշվավ մնաց ու մաթ մաթ բոլորը կաշեր: Կերակուրը իրենք ձեռք չտված՝ պարագիր կը: Ալ ճարը կտորավ, տղոցը դրկեց քառաւուն հատ խնձոր բերել տվեց, օդին երեսը սափմիշ էրավ, ես ա հավարով կուտեի, անքան անուշ էր օր՝ համեն հոտեն չի կշտանա: Ետև պաշլայեցի ժողվել խնձորը, կնիկս համրեց տեսավ օր, տասէրկու հատ պակսեր է, մատը խածեց՝ դարձավ ըսաց թե.



- Յրեշտակ ես, դև ես, մարդ ես՝ էրևիցի, ինչ օր գուզես կուտամ:

Սիրտս ալ չդիմացավ՝ փափաղս գլխես վար առա թե չէ,  
կնիկս ու տղաքս վլաս թափան ու լացին: Թիչ քիչ աղոնց  
սրտերն առա, նստանք անուշ անուշ զրցեցինք:

Ադ օրն անցավ, մեկալ օրը սապախտան կանուխ ելլեմ  
օր մեծ մամչս մեռեր է: Եհ ինչ պիտի էնեի, փառք կամեցա-  
ծին, ետըթին էրկու տղա առնեի:

Մեկալ գիշերն անցավ՝ սապախտան աշեմ օր օրթան-  
ճա մանչս մեռեր է: Աղոր ա շատ լացի, հըմը ինչ օգուտ: Կե-  
նա ախչիկմ ունեի՝ անիկա հերիք էր:


Խուլաս, ինչ էրկնցնեմ, մեկալ օրն ա ախչիկս մեռավ:  
Վրա չորս օրն ա աշեմ կնիկս ա մեռավ:

Եհ ալ ինձի ինչ մնաց աշխրքին էրեսը: Տղաքս մեռան,  
կնիկս մեռավ, ալ ո՞ւմ համար ապրիմ, կերթամ ես ա ծովը  
ընկնիմ խեղթիմ կը:

Ադ մտքով գնացի ծովին քանարը, ես ինձի ծովը քցեցի:  
Մեմ ա ուրտից էր ուրտից չէր մե մենծ ջանավարմ ինձի բե-  
րանն առավ, կուլ տվեց ու մտավ ծովին տակը:

Զիտեմ ալ ինչքան եմ մնացեն ջանավարին փորը, ավու-  
րը մեկը աշեմ ջանավարին փորին միջեն լուս էրևաց, հըմը  
կամաց-կամաց սողամ ու լուս աշխարհը էլնեմ:

Կամաց-կամաց քալելով էկա աս աշխարհըն ընկա,  
բըռնեցի աս խանութը ու նստեր սարծութեն կէնեմ կը, լավ



այսարներ շինեմ կը, վրան քաշեմ կը կնկանս ու տղոցս  
սղֆաքները: Քանի վրան կաշեմ կը՝ սիրտս կտոր կտոր  
գըլլի, ուշբս վերնա կը, մարած գընիմ վար, ետև խելքս  
գլոխս գուբա կենա վրան կաշեմ սիրտս թալկըտի կը,  
հերսս գելլե, կառնեմ ուրաքը կտոր բրտուզ կենեմ, վար  
լըլեմ կը ու նստեմ գուլամ»:

Խեղճ մարդն օր աս բաները պատմեր կը գուլար ու հե-  
ծեծար կը, եփ օր խլսուց աչբերը շոլրտեց ու մարավ, ըն-  
կավ վար:



Տպագրվում է ՀԺԴ-ի IV հասորից (Երևան, 1963, էջ 408-414), ուղ տպագրվել է ըստ  
«Ազգագրական համենք»-ում (19-րդ գիրք, էջ 158) հրատարակված տեքստի: Գրի է առել Երվանդ  
Լալայանը: Գրառման համգանանքների մասին տեղեկություն չկա:

## ԿԱԽԱՐԴ ԱՐԱՊՈ



‘Ըլլի չ’ըլլի ժամանակօվ մե էրիգ կնիգ գըլլին: Իրենք շատ աղքատ գըլլին: Օրըմ կնիգը կէրթա տներէն կօրկոտ, բ’լդուր կը մուրա: Գուքա մարթուն կ’ըսե կը.- Այ մա’րթ, քնա՛ մե քիչ մեշցէն վառելիք բ’եր, մե արուր էփենք, տաք տաք ուտենք:

Մարթը կացին կ’առնե կը, կ’էրթա մեշէն: Շատ կ’էրթա, քիչ կ’էրթա ռաստ գուքա կը խօշօր քյութուկիմ: Կացինը զարնե կը օր մի քանի կտօր փատ կօտրե, մե մա տեսնես մե արապ դ’ուս գուքա ու հարցնե կը.- Այ հօղածի՞ն, ի՞նչ գո’ւզես:


Մարթը շվարած կ’ըսե կը.- Աղա՛, խեղճ եմ, մեղք եմ, էկեր եմ մե քիչ փատ տանեմ, արուր էփեմ:

Արապը մեղքնա կը մարթուն վրա, կըսե.- Ես քեզի անպես մե քանըն տամ օր թօթեց թօն ուտես, չի’ պարայի: Տա’ր աս սինին եփօր ըսես. «Բ’ացվե սեղան, բ’ացվե», ի՞նչ տեսակ կերակուր ուզես պատրաստ գըլլի կը:

Մարթը ուրախությամբ սինին կառնե տուն գուքա: Տունը հասնելուն պես, սեղանը բ’երե կը կըսե.- Բ’ա’ցվե սեղան, բ’ացվե:

Անմիջապես սեղանին վրա ամեն տեսակ կերակուր ու խմելիք հազըր գըլլի կը:

Մե վախտ կանցնի, մարթ ու կնիգ մտածեն կը, թե. «Փաշային տուն կանչենք»: Մարթ դրկեն կը, փաշային տուն կը



կանչեն, սինին դ'մեն կը, կըսե մարթը. «Բ'ացվե, սեղանս,  
բ'ացվե», ամեն տեսակ կերակուրներ պատրաստ գռլին:  
Փաշան փօրը կուշտըմ կը կշտցնե: Շնօրհակալություն կը  
հայտնե ու դուս կելնե:

Փաշան նախանձելով խեղճ մարթու աղ սինիին վրա,  
գուզե ձեռնէն խլել: Մարթ դրկե կը սինիին գուզե: Խեղճ մար-  
թը առանց գ'իտնալու փաշայի միտքը, սինին կուտա կը,  
տանին: Յ'էքսի օրը փաշան մե ուրիշ սինիմ դրկե կը անօր  
սինիին տեղը:


Իրիկուն հացի նստած վախտը, մարթը կըսե.- Բ'ացվե',  
սեղանս, բ'ացվե,- ամնա շատ կը զարնանա օր կերակուր  
բ'ան հազր չկա, կը հասկնա փաշայի սատանությունը և  
բանըմ չի կրնա էնե:

Կանցնի մե վախտըմ, կենա կ'աղքտնան, կենա կմիզը էր-  
գան կըսե կը.- Մա'րթ, քնա' մի քիչ փատ բ'եր աբուրն էփենք  
ուտենք:

Մարթը կացին կառնե' կերպա անտառը, կը հանդիպի կե-  
նա ան քյութուկին, մեկ քանի հատ կացնով զարնե կը, Արա-  
պը դուրս կելնե, կ'ըսե.- Այ անկո'ւշտ մարթ, կենա ի՞նչ  
գուզես:

Մարթը վախնալով կ'ըսե կը.- Աղա', սինին փաշան ձեռ-  
քես առավ, կենա մնացինք խեղճ, անտեր: Խեղճ եմ, մեղք  
եմ, մե քիչըմ փատ տանիմ:

Արապը կատղած, կը վերցնե մարթուն էշըն կուտա կը,



Կըսե.-Եփօր ըսես «չիու զըռ», Ետնեն օսկի կը թափի:

Մարթը կուրախնա կը, հեծնի կը իշուն վրա, գուքա կը տուն: Տունը հասնելուն պես կըսե.- չիու, զըռ,- օսկիները կը թափին կը:


Մե օրըն, մարթ ու կնիգ, խելք խելքի կուտան, հեծնին կը էշը, կերթան կը բ'աղնիք: Յանվելու վախտը, համամժիին թենպեհ կընեն կը օր չ'ըլլի թե իշուն «չիու, զը՛ռ» ըսե, վերջը օսկիները կը թափի: Յամամժին ձ'են չի հանե, Եփօր անօնք նես կերթան, համամժին իշուն «չիու, զըռ» կըսե: Էշը օսկիները կը թափի: Յամամժին Եփօր աս բ'անը տեսնի կը, խելքը թացնե կը: Խարբար կենեն կը, մե հ'ուրիշ էշ բ'երել կուտա և մյուս էշը իրենց տունը ճամբել կուտա կը:

Լողանալէն վերջը, փարա տալու վախտը, մարթը իշուն ինչքան օր «չիու զըռ» կենե, էշը օսկի չի թափի. Երիգ կնիգ էշը կուտան իրենց լողանալու տեղը, կելնեն գուքան կը: Կանցնի մե վախտըն, կենա կաղքտնան:

Կիմը կըսե մարթուն.- Ք'նա' ցախ բեր, արուր էկենք:

Մարթը կելնի կերթա կենա էն քյութուկին ռաստ գուքա, վախնալօվ էրկու իրեք կացին կը զարնե, էն Արապը դուրս գուքա, կ'ըսե.- Ա՛յ հօղածին, դ'ուն ի՞նչ անկուշտ մարթ ես:- Եվքիչ մնա կը օր մարթուն ուտե:

Խեղճը կաղաչէ կը, պաղատէ կը, Արապին հերսը գիշնի կը: Աս անգամին ալ մե հատ երկանք կուտա կը, կըսե. «Օսկի կաղա»:



Մարթը ուրախ դառնա կը տուն: Քարերը սարքե կը, կաղա, օսկի կը թափի:

Մարթը կը գենկիննա, դ'րկիցները զ'իմանան, գուքան կը խափեն, կըսեն.- Մեն ձ'եր երկանքը տվեք, տանինք քիչըմ բ'լղուր աղանք ու բ'երենք:

Կը տանին, տեղը ուրիշ էնդերիե քարեր կը բ'երեն: Խեղճերը շատ կը դ'արցնեն, ալ օսկի չի թափի:

Կենա կաղքտնան կը, վախտըմ կանցնի, կնիզը կենա կըսե.- Պիտի էրթաս փատ բ'երելու:

Մարթը աս անգամ ճարը հատած կելնե կ'էրթա քյութուկին քօվը, մե կացին կը զարնե, Արապը դուս կ'ելնե կը, կըսե.- Այ անկուշտ հօղածին, աղքան բանը քեզի տվի չկշտացա՞ր, կենե՞ էկեր բ'ան գուզես:

Խեղճը կ'ըսե.- Ումեցած չունեցածն ուրիշները բիթտուն տարան, խեղճ եմ, եկա կտորմ փատ տանին:

Արապը, ճարը կտրած, ըսավ.- Աս անգամ ա ասի կօպալը տար, եփօր ըսես. «Կօպալ, ել ու հ'իչի», օսկի կը թափի:

Մարթը աս անգամ ա ուրախցավ: Կառնէ կը կօպալը, գուքա տուն: Եփօր կըսե. «Կօպալ, ել ու հ'իչի», կօպալը կելնե ու կիչնի իրեն գլխուն, լավը ծեծե կը:

Մարթը, խրատված, կառնե կօպալը, կէրթա փաշային տունը ու կըսե.- Փաշա, չըլի ըսես կօպալ ել ու հ'իչի, սորա օսկիները թափին կը:

Փաշան, կարծելով թե սինիին պես է, բիրտեն բիրե



կըսե.- Կօպալ ել ու հ'իչի:- Կօպալը կելօն կը, կ'իչնի կը էնքան զարնե կը փաշին գ'լսին, օր փաշան կըսե.- Այ, սինին տերն է էկե, տվեք թող տանի:

Մարթը կ'առնե սինին, քեֆով կը վազե բ'աղնեպանին քով: Բ'աղնեպանին կ'ըսե.- Զ'ըլլի թե ասօր ըսես կօպա'լ, ել ու հ'իչի, սորա օսկիները կը թափի:

Համամծին գիտնա կը թը, ադ ալ իշու պես է, կըսե.- Կօպա'լ, ե'լ ու հ'իչի,- էնքան կը զարնե օր համամծին կըսե.- Յամա՞ն, իշուն տերն է էկե, տվեք թող տանի էշը:

Երկանք տանօղ դ'րացիին տունը կերթա, անկից ալ երկանքը կ'առնե և ուրախ ուրախ տուն գուքա:

Կուտեն կը, խմեն կը, քեֆ կենեն կը:

Երկնքեն իրեք խնձօր հ'իչավ. մեկն ասօղին, մեկը՝ լսողին, մեկն ալ բօլօր աշխարհին:



Տպագովում է «Քայ ժողովրդական հեքիաթների» 4-րդ հատորից (Երևան, 1963, էջ 484-486), ըստ Հակոբ Սլրտչյանի գիտական տառադրձության: Գրառման մեջագիրը պահպանվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագործության հիմնադրության Բանախուսական արհեփում (Երվանդ Լալայանի ֆոն, գր. I, N 897): Զեռագրի վրա դրված է «Երվանդ Լալայանի խմբարշավ» կմիջը: Գրված է: «Երգորսի բարբառով, հակաբեց Բարենցան 1915 թ. դեկտ. 8, Երևան»:

## ԵՐՁՐՈՒՄՈՒՄ ՄԱՐԴ ՉԵՂԱՎ, ՍՏԱՄԲՈԼՈՒՄ ԱՐԱՎ ԵՂԱՎ



րզրումում ապրում էր մի ընտանիք, որը բաղկացած էր երեք անձնավորությունից, հորից, մորից և մի տղայից:

Որդին մի շատ վատ, շառլատան, անընդունակ տղա էր, իսկ հայրն էլ մի անպետք խարազ:

Հայրը մեռնելուց հետո թողնում է միմիայն մի կով, ուրիշ ոչինչ:

Ե՞հ, խեղճ մայրն ի՞նչ անի, ինչո՞վ կառավարվի, որդին բեղելվաթ, ոչ մի գործի, բանի չի կպչի, խեղճը ստիպված կըսկսէ կովի կաթը ծախել և այդպիսով ապրուստ հայթաթել ու ամեն օր տղին կը նախատե թե. «Գոնե հորդ սանիաթը արա, մի կտոր չոր հացի փող էլ է վաստկես»: Բայց որդին հեք, որտեղ լուսացնում, էնտեղ էլ մթնացնում է ու իրա օրերը անցնում է պարապությամբ:

Օրվա մեկն էլ սրա ընկերները բըզեզն են մտնում թե. «Մենք պիտի էրթանք Ստամբոլ, չե՞ս զա իրար հետ էրթանք, այնտեղ մեր գործը լավ անց է»:

Սա էլ, խելքին կը զորէ գուքա տուն ու մորը կըսե.- Ե-, մարս, գիտես ի՞նչ:

- Ի՞նչ,- կը պատասխանե մայրը:

- Ել վեր, հազրվե, որ մենք յարաններով պիտի էրթանք Ստամբոլ, այնտեղ մեր գործը շատ անց է: Ել, դուն էլ հազը եղիր, կովը հետվիս առնենք, էրթանք իսի մունտառ տեղեն,



բալքի այնտեղ մարդ դառնանք, այստեղ, այսպիսությունով մարդ չենք ըլլի:

Մայրը կըսե.- Ի՞նչ կըսես օղուլ, ի՞նչ հազըր, ի՞նչ բան, ինչով պիտի էրթանք, ունինք, չունինք զարի մե կովմ ունինք. ան ալ տանինք ճամբան սատկեցնենք, Ետև ի՞նչ էմենք, մանավանդ որ հորդ յաթիքյարն է, կովին կաշեմ կարոտս կառնեմ:

Տղան կըսե որ.- Չե՛, այդպիսի բաներ չկա մեր աշխարհումք, արդեն վծուել պրծել ենք, Ե՛լ, թե չէ անոնք կէրթան, մենք կը մնանք:

Ե՛հ, մայրն էլ ի՞նչ անի, ճարահատված գելնե, շալը կառնե, տղան ալ կովի չվանը բուկը կը ցկե, առաջ կը խառնեն հո՛, հո՛, կէրթան կը հասնին ընկերներուն, ու կը շարունակեն միասին ճանապարհները: Կովը կանանչ խոտը արծելով կէրթա, մայր ու տղա էլ բունբունալով-դունդունալով կէրթան ու կը հասնին ի մայրաքաղաքն Ստամբուլ:


ԾԾկերները կըհեռանան, այս տղան էլ կովի ու մոր հետ միասին կը գնան մի գետնափոր տուն կը բռնեն, մորն ու կովին կը տեղավորցնե, իսկ ինքը կէրթա, ո՞ւր, միայն տերը գիտե:

Մութը գընգնի, գութա տուն:

- Ե՛, մայրս, բանըմ կա՞ ուտելու:

Մայրն ալ կըսե.- Ինչ որ աստված տվել է:

Կուտեն ու կը քնին:



Այդպես մի քանի օր, մի երկու շաբաթ կանցնի, որդին  
պետքը չի սեպե, թե գործ աշե, բանի աշե:

Մայրը կըսե.- Որդի՞ս, ախր ասպես բան չի ըլլի, բերիր աս-  
տեղ ինձի ցկիր, թե լավ գործ կա, ո՞ւր է հըբը ոչինչ չես անե:

Տղան կըսե որ.- Մարս, քյարաստա է պե՞տք, քյարաստա՝

Մի օր էլ կըսե.- Մարս, բեր իդի կովը ծախե՞նք, փարին  
քյարաստա առնեմ, գործ անեմ, թե չէ այսպիսով բան չի ըլլի:

Մարը մի քիչ կը ընդդիմանա, հըմը որդին բանի տեղ չի  
դնե: Կովը կը բերե, չվանը բուկը կը ցկե ու առաջ կը խառնե:

Սիրտն ելած մայրը ճար ու ճուր կանե, այսքանը կըսե թե.

- Օղո՞ւ, տանելում կը տանիս, տես չխարվիս, այդ մեյ-  
դան այնպիսի մարդիկ կան, որ շատ կը խարեն:


- Ֆառա կաց, մարս, աղոր համար դարդ մի էնե, ինձի չեն  
կրնա խարե: Աստված դու առաջնորդե,- կըսե ու ճամբա կը  
ընկնի դեպի մեյդանը, կը հասնի խափանը ու կը կայնի:

Դրա դեմն էլ կա շինված մի շատ լավ, հոյակապ տուն:  
Նենց այդտեղ էլ բնակվում են այդ խաթեաները:

Աղան կը տեսնի, որ մի խամ մարդ մի լավ կով ձեռքը  
կանգնած է, կը կանչե ծառաներից մեկին (բալկոնից ցույց  
տալով).

- Տեսնո՞ւմ ես, կովը ձեռքը մոլորվել կայնել է, գնա',  
շո՛ւտ խարի՛, ձեռքիցը ա'ռ, բե՛ր:

Այս ծառան էլ հավար, հավար գուքա, կը մոտենա ու



կըսե.

- Բարի աչողութ:
- Աստծու բարին:
- Ծախու է, հա՛, ի՞նչ տամ իսի դառղիդ: (Մանչը կը զարմանա):

- Ի՞նչ դառղա, ի՞նչ կըսես:
- Ճըբը ինչ, դառղիդ ի՞նչ տամ:
- Տո ո՞ւր է դառղա, իմ ծախածըս կո՞վ է, կո՞վ, լավ, եղոտ կով:

- Դե լա՞վ, գինը ըսե, ի՞նչ տամ դառղիդ:  
Խեղճ մանջուն իերսը գելնե, կըսե կոր.- Գնա', ես ծախու դառղա չունեմ:

Ծառան քոռ փոշման, կէրթա, կըսե օր.- Աղա', չը կրցա խարել:

Սրա բարկությունը գուքա, կը կանչե ամենագլխավոր խարողին ու էլի ցույց տալով կըսե.


- Գնա', խարիր, բեր, լավ դավուրմացու է, ամենք և ուտենք:

Մյուսը ևս նրա պես կը գնա կըսե.

- Բարի աչողութ:

- Աստծու բարին:

- Աս ի՞նչ է ծախածդ, սառչա՞ է, ի՞նչ տամ, գինը ի՞նչ է:



Տղան կը զարիուրի ու կըսե ինքն իրան. «Այս ինչ տարօրինակ մարդիկ գուքան, մե կարգով մուշտարիմ չի գա, որ հոգիս խայլառ էնեն»:

- Իմ ծախածըս կո՞վ է կո՞վ, սառչան ի՞նչ է, բանն ի՞նչ է, կուզես առնել ըսե՝ կովիդ գինը ի՞նչ է:

Ելի ծառան կըսե.- Տո խելառ ես, ինչ ես, մեկ նայիր, դա կո՞վ է, սառչան է: Լավ, գինը ասա տանեմ, թող գյումանով կով ըլլի:

Տղան կըսե որ.- Ես քեզի պեսներին ոչ մալ կուտամ և ոչ ալ գին կասեմ, հայդե, գնա քու ճանփան:

Սա էլ դատարկ կերթա և միևնույն բանը կասե որ.- Զկարողացա, պինդ բան է շատ:

Աղայի հերսը շատ գելլե ու կըսե.- Բերեք մուշտակս, տեսք ես իհմի ի՞նչպես կը քերեմ:

Դագնի կապե կը՝ գա մեյդան.


- Տղա՛, այս ինչ լավ պլտրչին է, ծախո՞ւ է:

- Այո, աղա:

- Է, գինը ի՞նչ է:

- Է, - կըսե,- քեզի պես աղային հետ բազար անելը որն է, դու չիտե՞ս ինչ է որ:

- Գիտեմ, համա դու էլ ասա,- կըսե, ու կը շարունակե,- պըլտըրչին տուր տանեմ, զնա դու գինը իմացիր, ով որ ինչ արժեցնե, ես նրանից իհնգ դուրուշ էլ ավել տամ, տունըս էլ



այդ լավ տունն է:

Տղան կը գնա հարց ու փորձ կանե, գիմանա որ խափված է. «լավ» կըսէ ու կէրթա փողերն ստանալու: Ծառաներում կասե, որ գնան փողերը բերեն: 7-8 դուրուշ կառնե, կը գնա էն դռանը մոտը կը կանգնի, որտեղ կովին հավարհավար մորթում են: Ծառաները կասեն.- Ել ինչի՞ ես կանգնել, գնա' էլի:

Մանջը կըսէ.- Դարս որ մեռավ, օսիաթ արավ թե. «Ինչ կենք էր էր, կովն որ կը ծախտեք պոչը չը ծախտեք», հիմի կաղաշեմ որ պոչը տաք, ձեզի որ պետք չէ:

Դրանք էլ կուտան, ասիկ կառնե ու յալլա դամուրչ ընոցը, լավ, սրխ մինել կուտա, մեջքը կը կապե, կէրթա տուն, մորը կըսէ.


-Քա, մարս, տեսար, կըսես թե «խարվիս կը», այնպես մե աղայիմ ծախտեցի, որ այսքանը թեյ տվեց, ըսավ օր՝ «մյուսն ալ ետև կուտամ», հըմը մարս ինչ գըլլի իսի մեր դրկիցներն էվատի մե դաթըմ հալավ դայրա գտի:

Մարը կըսէ.- Օղուլ ի՞նչ պիտի էնես, կենա ինչ սատանան առաջդ պայրադէ բացել ուրմիշ ես եկե:

- Օ՛, չէ, չի ըլլի, իլլաքի պիտի գտնիս:

Մայրը կէրթա մե դաթըմ դայրա կը բերե, մանջը դոլթուր կը զարնե, կէրթա պառիկմախերի մոտ ու կըսէ.

- Ինձի մե լավ, 16-17 տարեկան աղջիկըն շինե, ահան ալ շորերս, հագու:



Պատիկմախնող կասե թե.- Մի ոսկի է:

- Թող լինի, կտամ (մի ոսկին էլ արժե 8-9 ռ.):

Կը շինե, կը հազնե, ուղիղ մի սիրուն, շատ սիրուն աղջիկ:

Սա սպիտակ չալման ոտքից գլուխ կառնե, կերթա այն աղայի պատշգամբի տակ կը կանգնի: Ծառաները կը նկատեն սրան, կը գան կը մոտենան ու կը հարցնեն, ի՞նչ է ուզում: Նա էլ կը պատասխանե թե.

- Զեր աղային հարցրեք թե աղջիկ պարոն սիրել չի՞ կամենում:

Սրանք կը նայեն երեսին, իրեշտակի նման մի սիրուն աղջիկ, կը գնան աղայի մոտ ու հարց կառաջարկեն թե.

- Աղա, մի աղջիկ պարոն է եկել, ասում է թե. «Զեր աղան աղջիկ պարոն չի՞ սիրում»:

Աղան հարցնում է.- Սիրո՞ւն է:


Ծառաները պատասխանում են.

- Շատ սիրուն է, նայել անգամ չէ կարելի, սիրունությունից մարդ կամաչե:

Աղան իսկույն կը հրամայե.- Յրավիրեցեք:

Ծառաները կը գնան և մերս կը բերեն. սրանք մեկս մեկու կը ողջունեն հետո աղան կասե.

- Աղջիկ պարոն, ինչո՞ւ մի քիչ վաղ չէկար, այսօր մենք դավուրմա էինք եփել և շատ լավը, վաղը գայիր բոզբաշը միասին ուտեինք: Բայց որ դա անցել է, կը հրամայե՞ք ձեզ



համար ղավուրմա թերել տամ մի քիչ ուտեք:

Աղջիկ պարոնն էլ կամք կտա: Աղան կը հրամայե ծառաներին, որ բերեն սեղան պատրաստեն: Իսկ աղջիկ պարոնը իր մտքումը կասե թե. «Գոնե չեղավ, չեղավ, մի անգամ էլե իմ կովիս միսը ուտենք»:

Սեղանը պատրաստելուց զանազան ուտելեղեններով, ծառաները կը հեռանան, իսկ սրանք կը նստին կուտեն, կը խմեն լավ, ուզածի պես, բավական ժամանակ էլ կանցնի, աղջիկ պարոնը կը հարցնե թե.- Զեր քնելու ժամանակը ե՞րբ է:

Աղան էլ պատասխանում է թե.- Ուզում ե՞ք հինա էլ կառելի է քնել:

Ծառաներին կը հրամայե անկողին պատրաստել: Նրանք էլ, ինչ որ աղան լավ և խաս բաներ ունի առաջ կը բերեն, կը պատրաստեն ու հետո կասեն թե. «Ել ինչ կը հրամայեք»: Աղջիկ պարոնը կասե, որ «ոչինչ» ու աղային կը հարցնի թե»- Զէ՞ր կարելի այս գիշեր ծառաներին մի կողմ հեռացնել:

Աղան կը կանչե քառասուն ծառային ամեն մինին մի մի ոսկի կտա և կասե.- Գնացեք, այս գիշեր դուք էլ քեֆ արեք, բայց որ լույսը կը բացվի արիք:

Սրանք ոսկիները կառնեն ու կնտըլ-մնտըլ սանդուղքներից իջնելով կէրթան: Դոները կփակեն ու իրանք էլ պառկելու կը պատրաստվին:



Աղջիկ պարոնը կասե որ.- Մեզանում սովորություն է, որ առաջ տղամարդը կը պառկի, հետո կինը:

Աղան կը պառկի, իսկ աղջիկ պարոնը ծխախոտը ծխելով ման գուքա և կը հետազոտե սենյակները, թե ինչ աչքի ընկնող բաներ կան: Բայց աղան համբերությունից դուրս էկած ասում է.

- Աղջիկ պարոն, դե արի':

- Լավ, գուքամ, - կըսե, ու (գիտեք ինչ, էն մըխած պոչը էլի իր մեջքում պահած ունի) էլի ծխելով ման գուքա:

Երկրորդ անգամ աղան կըսե. - Դե արի':

- Լավ,- կըսե, ու պոչը մեջքից հանելու թատառուկ կանե:

Մեկ էլ որ կասե, սա պոչից բռնած ցույց կտա գլխավերկից ու կը հարցնե.


- Աղա՝, իսիկ ի՞նչ է:

Աղան ասում է. - Զգիտեմ, պոչ է, ինչ է:

- Աղա', իսիկ ի՞նչ է:- Էլի,- աղա, իսիկ ի՞նչ է (վերջինը ավելի բարձր ձայնով):

Հետո իրան զարնելով աղային. «Ղառղա է, թե սառչա է, թե պլտրչին է, թե դառղա է, թե սառչա է, թե պլտրչին է, թե (կըսե ու կուտա չփլաղ աղային) ղառղա՝ է, թե սառչա է, թե' պլտրչին է», այնքան կը զարնե որ մարդը արյունլվա, փրփրած, ուշաթափ վայր կը ընկնի:

Աղջիկ պարոնը վերմակը քցելով վրան, ինչքան որ աչ-



Քի ընկած բաներ կան և արկղիկով ոսկին կը հավաքե ու կերպա, շորերը կը փոխե, իր շորերը կը հազմի, և դեպի տուն կուղղե յուր քայլերը և մորը կըսե.

- Մարս, ահա քեզ ոսկի և այսքան արծաթեղեններն էլ ընծա, կովն առնող աղան տվեց, տեսա՞՞ր ինչ լավ մարդու եմ ծախել, որ ինքը իրան խղճովը կը վարձատրե և ասավ որ՝ աստված շհատ լինի էլի կուտամ:

Մրան թողնենք իրա տունը, գնանք աղայի մոտ:

Լուսաբացին ծառաները գուրքան: Մի երկու ժամ սպասելուց կը տեսնին, որ ոչ ծայն կա և ոչ ծպտուն, իրանք իրանց կասեն. «Մեր աղան այսքան երկար քնողը չեր, չը լինի մի վտանգ պատահած լինի»: Մի քիչ էլ կըսպասեն, և ոչ մի ծայն:


Ծառաներից մեկը կըսե.- Ես կը գնամ և կը նայեմ:

Երբ ներս կը մտնի և կը տեսնի աղայի անկողինը գզված և արյունլվա, կը հավաքե մյուսներին, որ իմանան բանի էլությունը: Բոլորը կը հավաքվին կը գան, վերմակը հետ կը տանին և ի՞նչ, աղան փրփրած, արյունլվա ընկած է, համարյա անշնչացած: Մեկը ցած ծայնով ծայն կտա. «Աղա՛ (մի քիչ բարձր) աղա՛ (էլի բարձր), աղա՛:

Աղան էլ, մի հառաջ արծակելով՝ «Ը-ը-ը»:

- Տո տղերք, աղան դեռ կենդանի է, ջո՛լր, ջո՛լր հասցրեք:

Զուրը կը բերեն աղայի երեսին կը սրըսկեն, աղան ուշքի գուքա և կասե տնքալով.



- Այս, տղայք, գրող ուտեհնք, մահ ուտեհնք, այդ կովը չուտեհնք, գրող ուտեհնք, մահ ուտեհնք, այդ կովը չուտեհնք (Երեք անգամ կը կըրկնե):

Ծառաները բանի էությունը հասկանալով ասում են. «Դը-ըն, աղջիկ պարոնը կովի տե՞րն է եղել»:

Մրանք էստեղ մնան, մենք գնանք էն տղայի մոտ:

Են տղան էլ երկրորդ օրը կը գա աղայի պատշգամբի տակ և ականջ կանե, թե, աղան մեռավ թե կենդանի է և ինչ է պահանջում, կամ ուզում: Լսում է, որ աղան ասում է.

- Ինձ համար Ինկիլիզից մի հեքիմըն բերեք տվեք, այս-տեղիները չեմ ուզում:


Եվ ինչու համար, նրա համար որ այնքան խարեքա է, որ ամբողջ քաղաքը խարելով վառել է, վախենում է, թե այդ-տեղի բժիշկները կը թունավորեն իրան, ուստի կը պահանջե որ Ինկիլիզից բերել տան:

Ես տղան իմանալուն պես կը վագե պարիկմախեռի մոտ, ոսկին կը տա և կասե.

- Ինձ մի ինկիլիզ շինե:

Մի ցիլինտը էլ նորը բերել կտա, շորերը և իր ուզածի պես երիտասարդ, մի քանի պուզիրոկներ էլ կառնի, ծվի սպիտակուցը առանձին, դեղնուցը առանձին, ածխաջուր ու այդ տեսակ մի քանի բաներ դարսած մի կարգինի մեջ, անցնում էր փողոցներով ու բղավում.

- Ինկիլիզու եմ եկել, լավ, թագավորական լայեղ հեքիմ եմ:



Եվ երեք չորս անգամ անցնում էր հենց այն փողոցով, որտեղ էր աղայի բնակարանը: Այդ րոպեին տեսնում է դրան ծառաներից մեկը և տուն է վագում, աղային ասում.

- Աղա, մե հեթիմ է եկել ինկիլիզու, գուզես կանչեմ:

Աղան ասում է.- Կանչե, կանչե:

Ծառան իսկույն գուքա կը կանչե:

Սա էլ կը գա, վերև բարձրանալով աղայի մոտը կը քննե ցավերը ու կասե.

- Աղա, այս ինչ բան է, ասեմ ծեծել են, քեզ պես մարդուն ո՞վ պիտի վստահի ծեծելու, բայց քո վերքերը երևում են, որ ծեծված է, այն էլ մեխերով, վերքերը մեխի տեղեր են:

- Աղան կը զարմանա, թե այս ինչ լավ բժիշկ է, որ իսկույն հասկացավ բանի էռթյունը և կառաջարկե իր վարձատրությունն ու կըսե.

- Այժմ ի՞նչ է հարկավոր ինձ:

Նա էլ կը պատվիրե.- Բաղանիք:

Ծառան իսկույն գնում է և պատվիրում, որ ոչ ոքի ներս չը թողնեն, որ յուր աղան է գալու և լավ պատրաստեն:

Կը գա, աղային էլ կըսե որ.- Արդեն պատրաստ է:

Աղան կըսե ծառաներին, որ.- Դուք էլ բոլորդ արիք գնանք, բոլորն էլ ուրախանում են և հավաքվում գնալու:

Բայց ա. բժիշկը ասում է, որ.- Ես այդ տեսակ հագնված մարդկանց հետ տեղ չեմ գնում:



Եվ աղան կը իրամայե, որ ինչ խաս ու դումաշ շորեր  
ութեան նրանք հազմին և ոտներն էլ արծաթյա քոչերը:

Ամենքի պատրաստվելուց հետո երկու ծառան ընկնում  
են աղայի դութուղներից և ուղևորվում են բաղանիք: Երբ  
հասնում են, ծառաները աղային հանվեցնում ու տանում  
են ներս, իրանք էլ սկսում են հանվելը: Այն ժամանակ  
բժիշկը ասում է.

- Գիտե՞ք ինչ, ես աղայի շահ տամարից պիտի արյուն  
առնեն: Երբ սկսեն, նա կը ճվճրվա. «Յաման հասե՞ք,  
օգնեցե՞ք», չինի թե այդ րոպեին ներս մտնիք, ես կը  
շշկվեն, սխալ կը կտրեն և այն ժամանակ աղանի բանից  
կը պրժնի:

- Լավ,- կասեն, ու ամենքը կը հեռանան առանձին-  
առանձին լողանալու:


Հետո բժիշկն է ներս մտնում փեշտամալի տակից մեջ-  
քը փաթաթած կովի պոչը, ծխախոտը ծխելով գյորակի  
շուրջը կը պըտըտի, իսկ աղան հառաչելով ասում է.

- Իեթիմ աղա, վերքերս կսկծեց, չեմ դիմանա:

Իսկ բժիշկը ասում է.- Թող քրքրի դեռ վաղ է, ժամանակ  
կա.- ու պոչը մեջքից քիչ-քիչ դուրս կհանե, երբ երրորդ ան-  
գամ ասում է, թե. «Չեմ դիմանա», իեթիմը այդ րոպեին  
պոչը դուրս կը հանե ու զիսավերկը կը կանգնի.

- Աղա՞-, իսիկ ի՞նչ է:


Երբ աղան պոչը կը տեսնի, հոգուն տունը կը մարի:



Յեքիմը էլի կը կրկնե.- Աղա՝, իսիկ ի՞նչ է,- և երկրորդ անգամ էլի ծեծելով մարմնին, կը մրմնջա,- ղառղա' է, թե սառչա է, թե պլտրչին է, ղառղա է, թե սառչա է, թե պլտրչին է, թե ղառղա է, թե սառչա է, թե պլտրչին է: Նա կը բղավե, կաղաչե, օգնություն կը խնդրե, բայց ոչ մի տեղից, սա իրա գործը գիտե, տուր թե կտաս: Երբ տեսավ, թե արդեն ուշարափիվել է, փրփրած վայր է ընկել, կը թողմեն նրան այնտեղ այնպես և ինքը դուրս գալով, բոլոր շորերը, քոշերը կը հավաքե, դուռը դրսից կը փակե ու կը գնա: Տանելով, շորերը կը ծախտե քոշերը բոլորը, փողերը կառնե, շորերը կը փոխիտ ու տուն կերթա, մորը ասելով.- Ահա, մարս, կովը առնող աղան էլի այսքան փող տվեց, ու ասաց որ. «Աստված շհատ ըլլի, էլի կտամ»:

Դրան թողմենք իրա տունը, գանք մենք բաղանիք:

Ծառաները մի բոլ լողանալուց հետո կըսեն.- Աղայի ծայնը էլ չի գա, արիք գնանք տեսնինք ինչպես եղավ:- Կգան որ ինչ, աղան էլի այն դրության մեջ է, դեռ ավելի վատ, քան թե տունն էր: Արյունը կը հեղա, ինքը փրփրած. մեկը մյուսին ասում է. «Մի գուցե այդ բժիշկը էլի կովի տերը լիներ»: Կը լսեն, ականջ կը դնեն, որ աղան մի փոքր կը հըծծա, ծայն կը տան ցած ծայնով. «Աղա', աղա՝ (մի քիչ բարձր ծայնով), աղա՝», աղան ծայն է հանում. «Ը-ը-ը՝» հառաչ արձակելով՝ «Տղերք, ջուր հասցրեք, աղան դեռ կենդամի է»: Էլի ջրով մրով ուշքի կը բերեն, աղան էլի տնքալով կըսե.




- Գրո՞ղ ուտեի՞նք, մա՞հ ուտեի՞նք, այդ կովը չուտեինք:  
Ա՞խ, գրո՞ղ ուտեի՞նք, մա՞հ ուտեի՞նք, այդ կովը չուտեինք:

Ծառաները մեկ-մեկու երես են նայում և հասկանում էլի օյինբազությունը:

Վերջապես ծառաները դուրս գուքան, որ շորերը հագ-նին ու աղային տուն տանին, կնայեն որ՝ ոչ շոր կա, ոչ ոտնաման, այս ինչ բան է. ծայն կտան, կը բդավեն, ոչ ոք լսող չկա և ոչ էլ մարդ է երևան գալիս: Վերջապես շատ իրարանցումից համամշին գուքա, կը հարցնեն, նա էլ կը հայտնե, որ ինքը երբեք չէ եկել, ինչ որ իրանք եկել են ներս. «Ահա սա է իմ այստեղ գալը, ձեր գալուց հետո», ինչ անենք: Տուն կուղարկեն մեկիմ, որ շորեր բերի, հագմեն, տուն գնան: Շորերը կը հագնին, աղային կը հագցնեն և կը դնեն նասիլկի մեջ ու տուն կը տանին (որովհետև այն ժամանակ կառք չկար): Բաղանիքը, ասենք շատ թե քիչ օգնել էր, վերքերը կակդացել եր ու դեղերով, չնչին բաներով մի քիչ առողջացավ:


Մի ամիս ու կես, երկու ամիս ամցնելուց հետո, էլի մեր տղայի միտքը փոխվեց թե. «Մեկ գնամ տեսնին աղաս ինչ է անում, մեռա՞վ թե կենդանի է»: Յուր շորեռով էլի կը գնա պատշգամբի տակ ման կը գա և կը լսե, որ աղան ասում է. «Ինձ համար աչք անցուցեք, երբ կը տեսնիք քյարվանը, ինձ իմաց տվեք, որ պիտի գնամ հաճը, մի երկու տարի այս-տեղ մնամ, թե չէ էն սատանան որտեղ որ է կը գա և մի օք



գլխիս մի վտանգ կը բերի, գնամ մի քանի ժամանակ հեռանամ, թե աստված տվեց էլի հետ եկա, լավ, թե չէ՝ ինչ որ կամեցել է»: Այս տղան որ այս բաները կիմանա, իսկույն կը վազե մեյդանը, 2 ուղտ կը գնե, ուղտապանի շորերը, նրա աշկերտը մի օրով կը վարձե, կը գնա փողոցից զանգեր-զեր կառնե, ուղտերի վայ կը կախե ու փողոցով կանցկենա ու կը բղավե. «Մեծ քյարվան ունեմ 38 հատը քրեհով եմ տվել երկուսը է մնացել, ով որ կուզե թող գա հաճը կը տանեմ»: Ծառան կիմանա, այս, կը գնա աղային կասե, որ.- Յաճը գնացող կա, մեծ քյարվան,- ասում է,- ասում է, 38 հատըս քրեհով եմ տվել, մնացել է երկուսը, ով որ կուզե, թող գա, տանիմ:

Աղան կը հրամայե կանչել, կը հարցնե թե.- Կը տա՞նիս, բան,- նա էլ կասե, որ.- Ինչու չէ, թեզ պես աղային էլ մարդ չը տանի: Բազար կամեն, փողը գլխանց կառնե ու աղան ալ ծառաներուն կը հրամայե երկու սընդուկ ոսկի լցնել և բառնալ ուղտի վրա, իսկ մյուս ուղտը պատրաստել իրան նստելու: Ուղտապանի աշկերտը այս ամենը կարգադրելուց հետո աղային էլ կը նստեցնե, հետո մեկը մի ուղտը, մյուսը մեկը զընգընգալով աղային հաճը կտանեն քառասում ծառաներն էլ ետևիցը: Երբ մի քիչ կհեռանան, կըսե.- Աղա, մեղք են ծառաներդ, արձակե թող գնան, իմչքան էլի պիտի բաժանվիք, ինչո՞ւ գուր տեղը չարչարվին:

Աղան կըսե.- Այո, լավ ասիր, թող գնան,- և հրաժեշտի ողջույն տալուց հետո ասում է.- Մեր արհեստը պինդ պահե-



ցեք, տանըս լավ նայեցեք: Եկա` եկա, չեկա` ինչքան որ կարողություն ունեմ հավասար բաժանեցեք ու շարունակ մնացեք իմ տան մեջ ու ինձ ողորմի տվեք:

Այս տղան, աղայի ծառաներին ճանապարհ գցելուց հետո, իրա վարձած ուղտապահի աշկերտին էլ կը ճամբե ու հանգիստ կը շարունակե ճանապարհը:

Մի քիչ գնալուց հետո աղան կը հարցնե.- Ո՞ւր է քո քարվանը:


Նա էլ ցույց կուտա հեռվից թե.- Տե՞ս, այնտեղից երևում է, մի քիչ էլ գնանք կիասնենք:

Ելի կը շարունակեն ճանապարհը, աղան կարծես զգում է իր գլխի գալիքը և հարցնում է.- Ո՞ւր են, չեն երևում:

- Այ, էն դունանը որ կերևա, իմ քարավանն է, մի քիչ էլ, կը հասնենք: (Եվ զիտե՞ք, կովի պոչն էլի յուր մեջքում ունի պահած):

Կը գնան մի քիչ էլ, մի ժայռի կը հասնին, տղան չորս կողմը կը նայե, որ ոչ չկա, անայություն է տիրում այդտեղ, ուստի կանգ է առնում, պոչը մեջքից հանում, աղային դեմ անելով դարձյալ ասում է.- Աղա-, իսիկ ի՞նչ է, մեկ նայիր, աղա, իսիկ ի՞նչ է:

Բայց երևակայեցեք աղայի դրությունը էդ րոպեին, լեռին կը պատռվի, արյունը կը ցամաքի, ի՞նչ անի այդ ամայի տեղում: Կը սկսե աղաչել, պաղատել, բայց ուշք դարձնողը ո՞վ է, մտքումը տղան կըսն. «Դուք շատ շատերին եք



վառել, ես էլ ձեզ պիտի վառեմ» ու էլի կըսե.- Աղա-, իսիկ հ՞նչ է,- ու կը սկսե զարմելը. «Ղարդա- է, թե սառչա- է, թե պլտրչին է, ղարդա- է, թե սառչա- է, թե պլտրչին է, ղարդա, թե սառչա է, թե պլտրչին է» ու կուտա ջանին. այնքան որ հոգին ավանդած աղան ուղտի վրայից վայր կը ընկնի: Սա կը քաշե մի կողմ, մի բուռը հող կածն վրան, ինքը ոսկիքը, ուղտերը կառնե ու կերթա քաղաքը: Գիշերով կը հասմի, յուր շորերը կը հագնի, զընգզընգալով սունդուկներով ոսկին տուն կը տանի ու մորը կըսե.- Մարս, արի ոսկիքը տուն տար, կովիս գինն է, այս էրկու ուղտն էլ հետը աղան ինձ ընծայեց, բայց ես հ՞նչ եմ անուն ուղտը, ծախեմ, վաղը փող կանեմ:

Ու այդպես էլ արեց: Մի շքեղ տուն էլ վարձեցին, մոր հետ զուգվեցան ու սկսեցին կարգին ապրուստը:

Երգումում մարդ չէղավ, Ստամբուլում աղա էղավ:



Տապարվում է «Դայ ժողովրդական հեթանուն»-ի 4-րդ հատորից (Երևան, 1963, էջ 465-475): Գրամմար Շնոաշիրը պահպանում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Քանակական արխիվում (Երևան Լալայանի փող, գրք 1, N 898): Զեռագիր վրա դրված է «Երվան Լալայանի խմբաշավ» կմիքը: Վերնագիր չունի: Զեռագրի առաջին էջում վերնագրի փոխարքն գրված է «Ներքար», այնուհենև նոյն էջում հեթաքի կողմին գրված է. «Երգումի բարբառով»: Գրամման հանգանաճթերի ասացողի, գրի ամոնդի, ժամանակի և այլին մասին տեղեկություններ չկան:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒՆՈՍՔ ԱՅՍ ԳՐՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ .....	3
ԱՆԹԻՈՔ ԱՇԽԱՐՔ ԷՐԹՑՈՂՏՂԱՆ .....	5
ԷՐԿՈՒԱԽՊԱՐ .....	12
ՕԽԽԱՅ .....	16
ՊԻՒԼՊԻՒԼԻՆ ՀԵՖԻԱԹԸ .....	21
ԾՈՎՈՒԱՂՋԻԿԸ .....	27
ՄԻՍՈՂ .....	35
ԿԱԽԱՐԴ ԱՐԱՊԸ .....	46
ԷՐՁՈՒՆՈՒՄՈՒՄ ՄԱՐԴ ՉԵՂԱՎ, ԱՏԱՄԲՈԼՈՒՄ ԱՂԱ ԻՂԱՎ .....	51
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ .....	69





«ՄԻՏՔ» ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ԱՎԱԽԹԻ ՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՔԻԱԹՆԵՐ

ISBN 978-99941-2-635-4

Տպագրություն՝ օֆսեթ  
Չափսը՝ 64x90 1/16  
Թուղթը՝ կավճապատ  
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ  
Տպաքանակը՝ 500 օրինակ

 **TopPrint**

0014, Հայաստան, ք. Երևան, Արքոնց 13/7  
Էլ. փոստ՝ [info@topprint.am](mailto:info@topprint.am)



